

Նախարար Մելանի Ժողի Աերկայութեամբ Երեւանի մէջ տեղի ունեցաւ Գանատայի դեսպանատան բացումը



Կարդալ էջ 6

Քեպէզի Ազգային Ժողովը միաձայնութեամբ դատապարտեց Արցախի դէմ գործադրուած ատրաէճանակաւ յարձակումը

Հոկտեմբեր 25-ին կայացած նիստի ընթացքին, Գանատայի Քեպէզ նահանգի Ազգային Ժողովի պատգամաւորները միաձայնութեամբ դատապարտեցին Արցախի դէմ կատարուած ատրաէճանակաւ յարձակումը եւ պահանջեցին մարդասիրական գետնի վրայ լուծում գտնել Արցախէն բռնադատութի ենթարկուած 120,000 հայերուն համար: Իշխող Coalition Avenir Québec (CAQ) կուսակցութեան հայազգի պատգամաւոր Սելին Հայթայեանի ներկայացուցած դատապարտման բանաձեւը միաձայնութեամբ ընդունուեցաւ Ազգային Ժողովին կողմէ: Բանաձեւը նաեւ կը պահանջէ Արցախի Հանրապետութեան մէջ տակաւին ապրող հայ քաղաքացիներու պաշտպանութեան ապահովումը:

Ռազմական Գործողութիւններէն Ժամեր Ետք Հասկցայ, Որ Մնացած Ենք Մինակ. Ծահրամանեան

«Ռազմական գործողութիւնները սկսելէ ժամեր ետք հասկցայ, որ մնացած ենք մինակ. ուսական կողմը դիտորդի դերին մէջ էր: Արցախի հանրային պատկերասփիւռի կայանին տուած հարցազրոյցի ընթացքին յայտարարած է Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահրամանեանը:

«19 սեպտեմբերին ես առաւօտեան կը գտնուէի ուս խաղաղապահներու հրամանատարին մօտ, առաջին ազդակը, որ կարելի է սկսին ռազմական գործողութիւնները, եղած է այն, որ Շուշիի գրահապատի յուշարձանին մօտ, ուր կայ 2 յենակէտ՝ ուսական ու ազրպէյճանական, ազրպէյճանական յենակէտէն մօտեցած են ուսական յենակէտին եւ զգուշացուցած, որ թաքցուցէք անձնակազմը, շուտով պիտի աշխատի հրետանին: Այդ փաստը մենք ներկայացուցած ենք ուս խաղաղապահներու հրամանատարին. անոնք ալ տեղեակ էին ատոր մասին, եւ ճշգրտմանը ետք հաստատուած է այդ փաստը: Ինծի համար պարզ եղած է, որ որոշ ժամանակ ետք հաւանական է սկսի ռազմական գործողութիւնը: Արդէն տեւական ժամանակ մեր զինեալ ուժերը ու ուժային կառոյցները բարձր մարտական վիճակի բերուած էին, համապատասխան հրահանգները տրուած էին՝ ներառեալ քաղաքացիական պաշտպանութեան հետ կապուած», նշեց Շահրամանեան՝ աւելցնելով, որ աշխատասենեակ բարձրանալէ կէս ժամ ետք հրետակոծութիւնը սկսած է, գրեթէ բոլոր շրջանները կ'ենթարկուէին աշխուժ հրետակոծութեան:

«Պաշտպանութեան բանակը այլ ուժային կառոյցներու, նաեւ՝ մեր բնակչութեան հետ միասին սկսած է ռազմական գործողութիւններու պատասխան գործողութիւնները եւ նոյնինքն այդ գործողութիւններուն շնորհիւ էր, որ կարելի եղաւ ազրպէյճանական կողմէն բանակցութիւններու սկսիլ: Մեզի համար պարզ էր, որ անհրաժեշտ է կանգնեցնել ռազմական գործողութիւնները, քանի որ ուժերը անհամեմատ էին եւ ինչքան երկար շարունակէինք, այդքան՝ կ'ունենայինք զոհեր եւ կորուստներ», նշեց Շահրամանեան՝ աւելցնելով, որ իր նպատակը՝ իբրեւ Արցախի նախագահի՝ կը կայանար անոր մէջ, որ ըստ կարելոյն արագ կանգնեցուէին ռազմական գործողութիւնները, եւ խուսափէինք աւելի շատ զոհերէ:



Կարդալ էջ 5



HONDA GABRIEL

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Թորոնթոյի մէջ տեղի ունեցաւ ՀՄԸՄ Գանատայի Ծրջանի 47-րդ Ներկայացուցչական ժողովը

ՀՄԸՄ-ի Գանատայի Ծրջանի 47-րդ Ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 20-22 Հոկտեմբեր 2023-ի շաբաթավերջին, Թորոնթոյի Հայ կեդրոնէն ներս: Բացման ներկայ էին՝ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հոգեշնորհ Հայր Վարդան Վրդ. Թաշճեան, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Վահէ Թանաշեան, ՀՅԴ Գանատայի «Արարատեան» Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Սարգիս Քէօսէեան, ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային վարչութեան ներկայացուցիչ Մարալ Միսիրեան, Համազգայինի Գանատայի Ծրջանային վարչութեան ներկայացուցիչ Թալին Գրլըպրոզեան եւ ՀՅԴ ԳՊՄ-ի Ընդհանուր Վարիչ մարմնի ներկայացուցիչ Յորհրդ. Մկրտիչեան: Հիւրաբար ներկայ էին նաեւ ՀՄԸՄ-ի նախկին Կեդրոնական վարչութեան անդամն ու նախկին Ծրջանային վարչութեան ատենապետներ: Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին ՀՄԸՄ Գանատայի 5 մասնաճիւղերը՝ Թորոնթոյի, Մոնթրէալի, Գեմպրիքի, Լաւալի եւ Սենթ Գաթրինի նաեւ Համիլթընի միաւորը: Լիազօր ձայնով մասնակցողներուն թիւն էր 44:



որմէ ետք ընտրուեցաւ ժողովին դիւանը, երկու ատենապետներ՝ եղբ. Սամսոն Քաշքէճեան եւ եղբ. Վահան Զալիքեան, երկու ատենադպիրներ՝ եղբ. Բաֆֆի Թաշճեան եւ քոյր Շողիկ Ազարիկեան: Խօսք առաւ Հոգշ. Հայր Վարդան Վրդ. Թաշճեան, որ բարի գալուստ մաղթեց ՀՄԸՄ-ականներուն Թորոնթոյի գաղութէն ներս եւ հեզասահ ընթացք մաղթեց ժողովին:

Ներկայացուցաւ ՀՄԸՄ Գանատայի Ծրջանային վարչութեան երկամ-

եայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրները, ինչպէս նաեւ Գանատայի Ծրջանային խորհուրդի եւ մարզական յանձնախումբի տեղեկագիրները: Եղան լուսաբանական հարցումներ, կատարուեցաւ ըստ էութեան համապարփակ քննարկում եւ համապատասխան գնահատական: Երեք օրերու ընթացքին, քննարկուեցան սկստական, մարզական եւ կազմակերպչական նիւթեր ու մտահոգութիւններ, առաջարկուեցան բարելաման առաջարկներ, որոնցմէ որ-

դեգրուեցան շինիչ բանաձեւեր: Ժողովին ընթացքին առանձնապատուկ նիւթ դարձաւ արցախահայութեան եւ մանաւանդ Արցախէն տեղահանուած ՀՄԸՄ-ականներու ներկայ իրավիճակն ու անոնց ապրած ծանր պայմանները, որոնք կը ներկայանան մերօրեայ ամենամեծ մտահոգութիւններն ու առաջնահերթութիւնը: ՀՄԸՄ Գանատայի մասնաճիւղերէն եւ ժողովի մասնակիցներէն գումար մը հանգանակուեցաւ նորաստեղծ ՀՄԸՄ-«Արցախ Յոնտ»ին:

Ճահրամանեան. «Ռազմական Գործողութիւնները Սկսելէ Ժամեր Ետք Հասկցայ, Որ Մնացած Ենք Միմակ»

«Ռազմական գործողութիւնները սկսելէ ժամեր ետք հասկցայ, որ մնացած ենք մինակ. ուսուսական կողմը դիտորդի դերին մէջ էր: Արցախի հանրային պատկերասփիւռի կայանին տուած հարցազրոյցի ընթացքին յայտարարած է Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահրամանեանը:

«19 սեպտեմբերին ես առաւօտեան կը գտնուէի ուսուսական խաղաղապահներու հրամանատարին մօտ, առաջին ազդակը, որ կարելի է սկսին ուսուսական գործողութիւնները, եղած է այն, որ Շուշիի զրահապատի յուշարձանին մօտ, ուր կայ 2 յենակէտ՝ ուսուսական ու ազդեցմանական, ազդեցմանական յենակէտէն մօտեցած են ուսուսական յենակէտին եւ զգուշացուցած, որ թաքցուցէք անձնակազմը, չուտով պիտի աշխատի հրետանին: Այդ փաստը մենք ներկայացուցած ենք ուսուսական խաղաղապահներու հրամանատարին. անոնք ալ տեղեկ էին ատոր մասին, եւ ճշդումներէ ետք հաստատուած է այդ փաստը: Ինծի համար պարզ եղած է, որ որոշ ժամանակ ետք հաւանական է սկսի ուսուսական գործողութիւնը: Արդէն տեւական ժամանակ մեր զինեալ ուժերը ու ուժային կառույցները բարձր մարտական վիճակի բերուած էին, համապատասխան հրահանգները տրուած էին՝ ներառեալ քաղաքացիական պաշտպանութեան հետ կապուած», նշեց Շահրամանեան՝ աւելցնելով, որ աշխատասենեակ բարձրանալէ կէս ժամ ետք հրետակոծութիւնը սկսած է, գրեթէ բոլոր շրջանները կ'ենթարկուէին աշխուժ հրետակոծութեան:

«Ռազմական գործողութիւնները սկսելէ յետոյ ժամեր ետք ես հասկցած եմ, որ մենք մինակ ենք ազդեցմանական այդ նախադարձակումին դէմ: Ռուսական կողմը դիտորդի կարգավիճակին մէջ էր, մենք պէտք է ինքնորոյն ունակ ըլլայինք կարգաւորելու մեր հարցերը: Պաշտպանութեան բանակը այլ ուժային կառույցներու, նաեւ՝ մեր բնակչութեան հետ միասին սկսած է ուսուսական գործողութիւններու պատասխան գործողութիւնները եւ նոյնինքն այդ գործողութիւններուն շնորհիւ էր, որ կարելի եղաւ ազդեցմանական կողմէն բանակցութիւններու սկսել: Մեզի համար պարզ էր, որ անհրաժեշտ է կանգնեցնել ուսուսական գործողութիւնները, քանի որ ուժերը անհամեմատ էին եւ ինչքան երկար շարունակէինք, այդքան՝ կ'ունենայինք զոհեր եւ կորուստներ», նշեց Շահրամանեան՝ աւելցնելով, որ իր նպատակը՝ իբրեւ Արցախի նախագահ՝ կը կայանար անոր մէջ, որ ըստ կարելոյն արագ կանգնեցուէին ուսուսական գործողութիւնները, եւ խուսափէինք աւելի շատ զոհերէ:

Արցախը մնայուն Անկախութիւն ՀՄԸՄ-ի աշխատանքներուն մէջ

2-7 Հոկտեմբեր 2023-ին Հայաստանի մէջ գումարուած ՀՄԸՄ-ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովը, իր ընկալեալ օրակարգին կողքին, կարեւորութեամբ քննեց Արցախը ՀՄԸՄ-ի աշխատանքներուն մէջ մնայուն ներկայութիւն դարձնելու հրամայականը եւ որոշեց-

Ա. ՊԱՀՊԱՆԵԼ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԳԱՆԻՇՆԵՐԸ

ՀՄԸՄ. ազգային արժէքներու եւ խորհրդանիշներու աւանդապահ միութիւն է: Եռագոյն դրօշը, 1918-ի Հանրապետութեան զինանշանը, քայլերգը եւ անկախութեան խորհուրդը ան պահպանած է 70 տարի, երբ Հայաստան կորսնցուցած է իր անկախութիւնը: Այսօր, երբ դէմ յանդիման կը գտնուինք Արցախի Հանրապետութեան կորուստի իրականութեան դիմաց, ՀՄԸՄ. իր պարտքն ու պարտաւորութիւնը կը նկատէ տէր կանգնելու ու պահպանել Արցախի Հանրապետութեան խորհրդանիշները, այդ խորհրդանիշներու ընդմէջէն վառ պահելու համար Արցախի վերատիրացման խորհուրդը: Առ այդ, Պատգամաւորական Ժողովը առաջադրեց՝

- 1) ՀՄԸՄ-ի բոլոր ակումբներուն մէջ այսուհետեւ եռագոյնի կողքին պատուելի Արցախի Հանրապետութեան դրօշը:
- 2) ՀՄԸՄ-ի հրապարակային թէ բոլոր ներքին հանդիսութիւններուն, սկստական հաւաքներուն եւ մարզական հանդիպումներուն ծածանել նաեւ Արցախի դրօշը:
- 3) ՀՄԸՄ-ի աշխարհասփիւռ մարզական խումբերը եւ սկստական միաւորները իրենց տարազներուն վրայ կրեն Արցախը խորհրդանշող պէճեր:
- 4) ՀՄԸՄ-ի դաստիարակչական-քարոզչական ծրագիրներուն մէջ հիմնական եւ մնայուն տեղ տրամադրել Արցախին:

Բ. ՀԱՍՏԱՏԵԼ «Հ.Մ.Ը.Մ. ԱՐՑԱԽ ՀԻՄՆԱԳՐԱՄ»Ը

«Հ.Մ.Ը.Մ. Արցախ հիմնադրամ»ը պիտի հոգայ Արցախէն բռնի տեղահանուած ընտանիքներու կենցաղային անմիջական կարիքները: Հիմնադրամին եկամուտները պիտի գոյանան.-

- ՀՄԸՄ-ի մասնաճիւղերու եւ շրջաններու տարեկան հասութեան ձեռնարկներու եկամուտներու որոշ տոկոսէն փոխանցուած գումարներէն: - ՀՄԸՄ.ականներու անդամատուրքերուն վրայ այս նպատակին համար կատարուած յանձնումներէն: - ՀՄԸՄ-ի համակիր շրջանակին մօտ կատարուելիք ժողովրդային հանգանականութիւններէն:

Գ. ՄՇԱԿԵԼ ԱՐՑԱԽԻ ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ՀՄԸՄ. յատուկ ուշադրութեան պիտի արժանացնէ Արցախէն բռնի տեղահանուած ընտանիքներու փոքրիկները, անոնց համար մշակելով դաստիարակչական-սկստական յատուկ ծրագիրներ, ինչպէս միութիւնը իր հիմնադրութեան օրերուն կատարած էր Արեւմտահայաստանէն Պոլիս ապաստանած գաղթականներու զաւակներուն եւ որբերուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ


Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱՒՊԳՈՅՆ ՍՊԱՍՍՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

*Նոր Յացէ՛ք՝ **PERMIS DE QUÉBEC**

Voyages Haig Travel | Tel: + 1 514-284-7676
 4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2 | Email info@haigtravel.ca

Քաղաքական Կամքի Բախտորոշ Վայրկեանը

Արցախը չկայ: Ան խլուած է ոչ միայն մեր հայրենիքի հողային ամբողջականութենէն, այլեւ (այլ մանաւա՛նդ) մեր էութենէն: Այսօր խոցուած ենք ազգովին եւ կ'ապրինք ջարդուած խղճմտանքով:

Եւ հետեւաբար այսօր է ժամը հարց տալու, թէ գործօններէն ո՞րն է այն վճռորոշ գործօնը, որ ներկայ կացութեան մէջ կրնայ կասեցնել եւ ետ շրջել մեր կեանքի գահալէժը եւ մեզ վերստին դնել (թէկուզ այս ուշ ժամուն) ուժական ընթացքի մէջ:

Աշխարհաքաղաքական աքցանը, որուն մէջ կը գտնուի հայ պետականութիւնը այսօր, աննախընթացօրէն դաժան է: Ան կը պահանջէ նոր մտքեր, նոր գէնքեր, նոր զօրաշարժ, նոր ռազմավարութիւն: Ան կը պահանջէ նոր գիտութիւն սպառնալիքներու բնոյթին մասին եւ նոր յանձնառութիւն՝ թշնամին դիմագրաւելու եւ զայն զգեստելու: Պիտի յստակօրէն գիտնանք, թէ ո՞վ է թշնամին, ի՞նչ է թշնամին, ո՞ւր է թշնամին: Հարկ կա՞յ կրկնելու, որ այս կոտլին ռազմաճակատը կ'երկարի Սիւնիքէն մինչեւ Մոսկուա եւ մինչեւ աշխարհի հեռաւոր անկիւնները:

Մեր «ռազմավարական դաշնակից»-ը, իբրեւ այդպիսին, չքացած է շրջանի ռազմաբեմէն: Ռուսիոյ ազգային գերագոյն շահերը այժմ կը ներկայացուին Մոսկուայի մէջ ամրացած փութիւնեան վարչախումերին կողմէ, որ միտմանակ գործընկերային խորունկ շահերով կ'ապուած է Ալիեւի ֆիւնանսական կայսրութեան եւ այս վերջինին օրկանապէս մաս կազմող Թուրքիոյ եւ Իսրայէլի շահացանցերուն: Այսօր ցաւով կ'ընդգծեմ, որ այս կէտին վրայ, ռազմաբեմին վրայ գործողը Ռուսիոյ ազգային մեծապետական շահերը չեն այլեւս, այլ Մոսկուայի իշխանական հաստատութեան (establishment) խմբակային եւ անձնական շահերը, որոնք խախտած են աշխարհաքաղաքական խաղաքարտերու դասաւորումը շրջանին մէջ եւ փոխա՛ծ տարերքը Կովկասի ուժային քարտէսին:

Որքան ալ խօսակարծային (paradoxical) թուի պարագան, պիտի ընդունինք, որ Ռուսիան ինքզինք չի ներկայացնել այլեւս: Փութիւնն է, որ կը ներկայացնէ Ռուսիան, եւ այդ իսկ է հարցը: Վճռողը Ռուսիոյ ռազմավարական հետահայ շահերը չեն այլեւս, այլ փութիւնեան համարակի յատուկ շահերը (special interests), որոնք անպայման նոյնը չեն: Յամենայն դէպս նոյնը չեն Հայաստանի կենսական շահերու տեսանկիւնէն: Շահերու այս զանազանութիւնը լրջօրէն հաշուի առնելով է միայն, որ կարելի է ճիշդ գնահատական տալ հայկական կողմի ներկայ ճգնաժամին եւ փոխընտրութիւններուն:

Շահերու խաչաձեւման այս փաստը նաեւ ամրագրուած է Փութիւնի եւ Ալիեւի միջեւ ստորագրուած եւ 43 կէտերէ բաղկացած փետրուար 24, 2022 թուակիր Մոսկուայի համաձայնագրով, որ բացայայտօրէն ճանաչում կու տայ Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան՝ ինքնաբերաբար հաւաստելով նաեւ, որ Արցախը մաս կը կազմէ յիշեալ ամբողջականութեան: Հանգամանք, որ բացայայտ հակասութեան մէջ է Արցախի կարգավիճակի խնդրով ԵԱՀԿ-ի Մատրիտեան պագաթմոտովին կողմէ հաստատուած սկզբունքներուն հետ, որոնք դարբիններէն մէկը նոյնինքն Ռուսիան էր:

Փութիւն-Ալիեւ համաձայնագիրը նաեւ կը յստակացնէ, որ կողմերը պիտի յարգեն մէկգմէկու ռազմավարական շահերը Կովկասի խնդիրներուն կապակցութեամբ: Իրականութեան մէջ, Փութիւնն է, որ յատուկ տեղ պիտի տայ Ալիեւի քաղաքականութեան հրամայականներուն Կովկասի մէջ: ԱՅՍ ԱՌՈՒՄՈՎ, ՄՈՍԿ-

ՈՒԱ Ի ՅԱՌԱՋԱԳՈՒՆԷ ՄԵԾ ԱՌԱՒԵ-ԼՈՒԹԵԱՄԲ ՄԸ Կ ՕԺՏԷ ԱԶՐՊԷՅՅԱՆԸ՝ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՐԵԼՈՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԵՒ ԱՊԱԳՈՐԾՕՆ (dysfunctional) ԴԻՐՔԵՐՈՒ ՎՐԱՅ: Պէտք է գիտակցինք այս դառն ճշմարտութեան եւ ընդունինք, որ ներկայիս չունինք ռազմավարական դաշնակից, քանի որ ան (երկար ատեն է ի վեր) առեւանգուած է (hijacked) Փութիւն-Ալիեւ յարաբերութիւններու նոր դաշինքին կողմէ: Հետեւաբար ինչո՞ւ զարմանալ, երբ Փութիւն իր համատուութեան կնիքը կը դնէ Արցախի ինքնիշխանութեան խնդրին վրայ՝ լիովին իւրացնելով Ալիեւի թէզերը եւ շնակնօրէն (ցինիզմով) վկայակոչելով Փաշինեանի բարբառնաքները իբրեւ հիմ Մոսկուայի նոր կողմնորոշման: Ինչո՞ւ զարմանալ, երբ Մոսկուայի աչքերուն առջեւ Ալիեւ դժոխքի կը վերածէ Արցախը (եւ զայն բռնի կը հայթափէ) լայնօրէն օգտագործելով Մոսկուայի (եւ Թուրքիոյ եւ Իսրայէլի եւ Արեւմուտքի) կողմէ հայթայթուած զինատեսակներն ու ռազմաարհեստագիտական տեղեկոյթը:

Այս բոլորէն պէտք չէ հետեցնել, որ Մոսկուա կը պատրաստուի հրաժարիլ իր կովկասեան դիրքերէն եւ զանոնք յանձնել Ալիեւի եւ Էրտողանի: Ո՛չ: Այս կէտին վրայ, դժուար է բնորոշում տալ Մոսկուայի հեռահար փոխընտրութիւններուն Կովկասի մէջ: Կը տարուի մտածելու, որ անոնք դեռ յստակ չեն նոյնիսկ Փութիւնի համար՝ Մոսկուայի establishment-ը (ի տարբերութիւն կայսերական Ռուսիոյ) կը թուի մտածել եւ գործել աւելի կարճաժամկէտ հորիզոնով: Առայժմ պարզ է միայն մէկ բան: Ներկայի մոսկովեան հաստատութիւնը ուժեղ շահագրգիռներով (incentives) իր գրաւը դրած է ԱԼԻԵՒԻ ՎՐԱՅ՝ հայկական կողմը լքելով իր ճակատագրին: Եւ ասոր առաջին գոհը փաստօրէն Արցախն է եւ Արցախի մեր ժողովուրդը:

Մոսկուայի հաշուարկին մէջ, հայկական կողմը այլեւս չունի տարածաշրջանային գործօնի կարգավիճակ: Իսկ Ազրպէյճանը՝ անպայման ունի: Ան անվիճելիօրէն կը վայելէ «մրցակցային առաւելութիւն» Հայաստանի վրայ: Հայաստանը կորսնցուցած է խօսակիցի իր արժէքը Փութիւնի եւ Մոսկուայի համար: Մոսկուայի իրական խօսակիցները Կովկասի մէջ Ալիեւն ու Էրտողանն են այսօր: Եւ անպայման՝ Իրա՛նը:

Միւս կողմէ, Մոսկուան կը գիտակցի, որ Թուրքեւազրպէյճանական գործօնը Կովկասի մէջ թէ՛ սպառնալիք է իր տարածաշրջանային շահերուն եւ թէ՛ երաշխի՛ք՝ իր խմբակային շահերու ապահովման: Բարդ հիւսուածք մը, որմէ խուսափելու ձեւ չունի ան այլեւս: Այսօր, Մոսկուայի խնդիրն է ճիշդ կառավարել այս երկուութիւնը: Այսինքն՝ միտմանակ «սիրել-ատել» ու այս սիրախաղը (love-hate relationship): Եւ այդ նուրբ եւ լլբրծուն գործին համար եւ փութիւնեան Մոսկուայի դիրքերէն: Հայաստանն ու Արցախը շահեկան են միայն իբրեւ «առուձախ» խաղաքարտ: Յամենայն դէպս ո՛չ իբրեւ Ռուսիոյ մեծապետական շահերու կենսական յենարան:

Այս ակննուած փոխյարաբերութիւններու համատեքստին մէջ է, որ Ալիեւ կրցաւ «գնել» Մոսկուայէն (ա) 44-օրեայ պատերազմի իր յաղթանակը հայկական տարածքներու լայնածաւալ իւրացումներով, (բ) հայկական ռազմութիւնը քանդելու «արտօնութիւն»ը, (գ) Արցախն ու Հայաստանը պատանդելու «իրաւունք»ը, (դ) Մոսկուայի դռները հայ դիւանագիտութեան առջեւ փակելու պատեհութիւնը եւ (ե) Սիւնիքի քաղաքական ապագան պայմանաւորելու մեծ կարելիութիւնը: Այսինքն՝ հայկական ներկայութիւնը տարածաշրջանի բեմէն

քաղաքականօրէն չքացնելու համաձայնութիւնը, եւ այս գործարքը դեռ վերջ է գտած:

Ասիկա հսկայ ոստիւն մըն է Ալիեւի եւ Թուրքիոյ համար տարածաշրջանի սակարկութիւններու սեղանին վրայ: Ազրպէյճան այժմ կը տիրապետէ բոլոր կենսական խաղաքարտերուն: Շերեփը Ալիեւին ձեռքն է: Շերեփը մանաւանդ Էրտողանի ձեռքն է (եւ Իսրայէլի): Կարելի է միայն պատկերացնել, թէ ի՞նչ փոխարժէքի դիմաց: Կրկնե՛մ. ողբերգութիւնը այն է, որ Մոսկուան՝ ի՛նքը լայնօրէն պատանդուած է իր նեղ շահակցական ոլորտի գործօններով, երբ հարցը կը վերաբերի Հայաստանին ու Արցախին: Պատանդուած է Ալիեւի կողմէ: Որ կը նշանակէ՝ Թուրքիոյ եւ անուղակիօրէն Իսրայէլի:

Այս բոլորէն ետք, կարելի է տակաւին պնդել, որ տարածաշրջանի աշխարհաքաղաքական բեմին վրայ Ռուսիոյ եւ Հայաստանի միջեւ ԲՆԱԿԱՆ դաշնակցի (natural ally) յարաբերութիւնները կը մնան ի գօրու, թէեւ սառեցուած՝ փութիւնեան վարչակարգին (եւ Փաշինեանի) կողմէ: Պէտք է ենթադրել, որ Ռուսիոյ ազգային գերագոյն շահերը տակաւին կ'ապուած են Ռուսիա-Հայաստան-Իրան հիւսիս-հարաւ առանցքին, որ ի վերջոյ պէտք է ինքզինք պարտադրէ տարածաշրջանի իրականութեան: Եթէ ճիշդ է այս վարկածը, Ռուսիա պէտք է ի վերջոյ վերականգնէ իր գերագոյն շահերու անգրիջելիութիւնը փանթուրքիստական մնայուն սպառնալիքին դիմաց: Ընդունինք եւ սակայն նաեւ հարց տանք՝ ե՞րբ, եւ ինչպե՞ս:

Այդ մէկը կ'ենթադրէ Ռուսիոյ ներքին քաղաքական դաշտի արմատական յեղաշրջում եւ արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններու հիմնական փոփոխութիւններ: Այդ մէկը կ'ենթադրէ Ռուսիոյ ուժային գերակայութեան վերականգնում իր ծայրամասային գօտիներուն մէջ: Եւ, անշուշտ, հարց է թէ ո՞վ կրնայ գլխաւորել այսօր յարացոյցի նման փոփոխութիւն մը Ռուսիոյ քաղաքական բեմին վրայ (Յամենայն դէպս՝ ոչ Փութիւնը): Եւ անպայման հարց պէտք է տալ, թէ իսկապէս ի՞նչ կ'արժեն այս թէչական ակնկալութիւնները Ռուսիայէն այսօրուան մեր մեծ ճգնաժամին դէմ յանդիման: Վայրկեաններ կարելոր են մեզի համար եւ անոնք համրուած են: Անոնք մեր կենսական տարածութիւնն են այսօր, որ սարսափելիօրէն նեղ է: Մենք մտխելու ժամանակ եւ լուսանցք չունինք այլեւս:

Մենք պիտի չմոռնանք, որ բնական դաշնակցի յարաբերութիւնները, իրենց հում վիճակին մէջ, դեռեւս դաշնակցային չեն: Անոնք տարբերային բնոյթ ունին եւ հետեւաբար անոնց վրայ կարելի չէ քաղաքականութիւն ձեւաւորել առանց զանոնք քու ձեռքերուդ մէջ առնելու եւ զանոնք իսկապէս խմորելու: Զանոնք պէտք է տեւաբար մշակել, իմաստաւորել, հարստացնել, այժմէսցնել, վերասահմանել իրերու զարգացման ամէն մէկ հանգրուանին վրայ: Բնական դաշնակցի յարաբերութիւնները պէտք է վերածուին ամէնօրեայ գործօն յարաբերութիւններու եւ կենսաձեւի, որպէսզի վերածուին լժակային ուժակաւորութեան: Ալիեւ այս խաղին մէջ մտաւ «տիարութեան» դիրքերէ, բայց կրցաւ Ռուսիա-Հայաստան բնական դաշնակցի յարաբերութիւններու դարպասը փուլ բերել եւ մեզմէ առաջ անցնիլ ինչո՞ւ եւ ինչպե՞ս:

Այստեղ է, որ իր բացարձակ մերկութեանը մէջ կը բացայայտուի այն ճակատագրական աղէտը, որ կը կոչուի փաշինեանական համակարգ: Ան պարագայական երեւոյթ մը չէ հայ պետականութեան կեանքին մէջ: Ան եկած է կազմակերպելու հայ անկախ պետականութեան հետեւողական կազմաքանդումը:

Այս կէտին վրայ, հայ անկախ պետականութիւնը կազմաքանդման սուր մարտահրաւէրներու առջեւ կը գտնուի ոչ միայն դուրսէն, այլ մանաւանդ ներսէն: Դուրսի եւ ներսի սպառնալիքները այս պարագային կը գործեն ՄԻԱՏԵՂ եւ զիրար կ'ուժականացնեն հետզհետէ անպարտելի դարձնելով թշնամին:

Բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ փաշինեանական համակարգը գործիքակազմն իսկ է վերոյիշեալ ռազմավարութեան, որուն տէրերը արտաքին ուժերն են եւ գլխաւորաբար Թուրքիան: Աշխարհաքաղաքական առաջին առաջնահերթ խնդիրն է այսօր ձեռքազատուիլ իր կենսական ուժակաւորութիւնները կազմալուծող այս իշխանութենէն: Ներկայիս, իշխանութեան վրայ գտնուող վարչակարգը (եթէ ուզէ իսկ) չի կրնար լուծում բերել երկրի լինելիութեան խնդիրներուն: Ան պէտք է դուրս գայ իշխանութեան դիրքերէն, եթէ ազգը պիտի կարողանայ վերստին տէր կանգնիլ իր ճակատագրին: Իսկ կեանքը ցոյց տուաւ, որ այդ մէկը դիւրաւ յաղթահարուող թիրախ մը չէ այս կէտին վրայ:

Փաշինեանական համակարգը (նոյնիսկ անկախ իր դիտաւորութիւններէն) կը մշտնջենաւորէ պարտութեան վարչակարգը Հայաստանի մէջ եւ անօգորութեան կը մատնէ մեզ հայրենիքի եւ սփիւռքի մէջ: Այս իրավիճակը կարելի դարձաւ 44-օրեայ պատերազմի թուրքեւազրպէյճանական ռազմավարութեամբ եւ գործօն աջակցութեամբ փութիւնեան Մոսկուայի: Եւ սակայն այն իրողութիւնը, որ փութիւնեան Մոսկուան (իր նեղ շահերէն ելլելով) մաս կազմեց հայկական կողմի պարտութեան գործընթացին, ամբողջովին չի բացատրել հայկական գործօնի քայքայման հոլովոյթը:

Այստեղ կարելոր է, որ քննարկման ենթարկենք Արեւմուտքի դերակատարութեան խնդիրը:

Հակառակ պատմական ջերմ եւ բազմաշերտ յարաբերութիւններուն, Արեւմուտքի առաջնահերթութիւնները Հայաստանի նկատմամբ միշտ ալ պառակտուած են տարածաշրջանային հակասական շահերու գործօններով: Ասիկա ճիշդ է մանաւանդ այսօր: Արեւմուտքի գործընկերը Կովկասի մէջ Թուրքիան է եւ վերջինիս արբանեակ՝ Ազրպէյճանը: Տասնամակններու ընթացքին, Թուրքիան ինքզինք հաստատեց իբրեւ ՕԹԱՆ-ի գլխաւոր խարխիւր Միջին Արեւելքի մէջ եւ Ռուսիոյ ամէնէն զգայուն սահմանագծերուն վրայ: Թուրքիոյ կշիռը անգերազանցելի է եւ անփոխարինելի՝ Արեւմուտքի տարածաշրջանային քաղաքականութեան բոլոր էական ճակատներուն վրայ: Այս փաստը կարելի չէ անտեսել որեւէ պայմանով: Արեւմուտքը բուռն վէճեր կրնայ ունենալ Թուրքիոյ յաջորդական իշխանութեանց եւ անհատ ղեկավարներուն հետ (ունի Էրտողանի հետ), բայց Թուրքիան փոխարինող այլ ուժ, իբրեւ ռազմավարական գործընկեր, գոյութիւն չունի տարածաշրջանին մէջ:

Գարձեալ, անկախ այն բանէն, թէ Արեւմուտքի ղեկավարներն ու դիւանագէտները ի՞նչ հաւաստիքներ կու տան Հայաստանի եւ սփիւռքի իրենց խօսակիցներուն, Արեւմուտքի փոխընտրութիւնները ի սկզբանէ կաշկանդուած են Հայաստանի հետ յարաբերութիւններու ոլորտին մէջ: Այս հանգամանքը պիտի չփոխուի կանխատեսելի ապագային:

Արեւմուտքի դիտաւորութիւնները Կովկասի մէջ ներկայիս խթանուած են մէկ կողմէ Ռուսիան հակադրուելու եւ զայն տկարութեան դիրքերու վրայ դնելու հրամայականէն, իսկ միւս կողմէ՝

Քաղաքական... Ծար... Էջ 5

Հաղորդագրություն՝ ՀՕՄ-ի Համահայկական 73-րդ Պատգամատրական Ժողովի

Հայ օգնությունների միությունների Համահայկական 73-րդ պատգամատրական ժողովը տեղի ունեցավ 16-20 հոկտեմբեր 2023-ին, Հայաստան:

Ժողովին մասնակցեցան միությունների 12 շրջաններին 11-էն 41 պատգամատրականներ, 10 պատգամատրականներ՝ 10 մեկուսիներէ, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ընթացակարգ կազմը՝ 11 անդամներ, 11 հիւրեր՝ Արցախէն եւ շրջաններէն, ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տօնապետեան եւ Համագործակցութեան ներկայացուցիչներ (փոխնիսի փոխ)՝ Արտաշէս Շահապետեան եւ Տիգրան Պապիկեան, 66 ունկնդիրներ եւ 5 անձնակազմ:

Պատգամատրական ժողովը մասնաժողովներով քննարկեց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան բազմաճիւղ եւ բազում տաղանայներով լին՝ 2019-2023 քառամեակի գործունէութիւնը եւ յոյժ գնահատելի նկատեց կատարուած աշխատանքները, յատկապէս այն առումով, որ անոնք ի գործ դրուեցան անբնական պայմաններու մէջ եւ հայրենական համար ճակատագրական փոփոխութեան շրջաններէն:

Ժողովը լայնօրէն անդրադարձաւ միությունների յարաբերական, նիւթական, կրթական, խնամատարական, առողջապահական, կազմակերպչական եւ քարոզչական ծրագրերներուն, լուսարձակի տակ առաւ հրատապ հարցերը եւ համապատասխան առաջարկներով ու որոշումներով քայլեր առաջադրեց անոնց շարունակութիւնը երաշխաւորելու եւ

յաւելեալ թափ տալու:

ՀՕՄ-ի Համահայկական 73-րդ պատգամատրական ժողովին քննարկումներու, ծրագրաւորումներու եւ մտահոգութեան առանցքները Արցախի ու իրենց հայրենի հողէն բռնի տեղահանուած արցախահայութիւնն էին: Արդարեւ, համապարփակ կերպով խօսուեցաւ անոնց ծով կարիքներուն մասին, հաստատուեցաւ կարելի ամէն ձեւերով եւ միջոցներով բազում տաղանայներու դէմ յանդիման կանգնած Արցախի մեր քոյր-եղբայրներուն նեցուկ կանգնելու հրամայականը, ներկայացուցանանք ցարդ ձեռնարկուած օժանդակութեան տարբեր ծրագրերը եւ իրենց գործնական քայլ տեղւոյն վրայ կատարուեցաւ արցախահայութեան նուիրուած հանգանակութիւն, որուն ընթացքին ցարդ գոյացաւ մօտաւորապէս 500 հազար ամերիկեան տոլար՝ միաւորներէն ու անդամներէն:

Յատկանշական էր, որ Արցախի ՀՕՄ-ականները իրենց վկայութիւններով ժողովը իրագրեց դարձուցին Արցախէն բռնի տեղահանման եւ ներկայիս Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ տարածուած ժողովուրդին ունեցած դժուարութիւններուն մասին:

Ժողովականները մանրամասն կերպով ծանօթացան ՀՕՄ-ի Ախուրեանի «Մօր եւ մանկան առողջապահական կեդրոն»-ին ծաւալած կարեւոր աշխատանքին, մատուցած առանցքային ծառայութիւններուն, արձանագրած յաջողութիւններուն եւ ներկայ մարտահրա-

ւերներուն, որոնց կարգին հիմնական է կեդրոնի ընդարձակումը, որուն նպատակով ալ կրկին տեղւոյն վրայ կատարուեցաւ հանգանակութիւն, որուն հասոյթը կազմեց 60 հազար ամերիկեան տոլար, որպէսզի առկայ դժուարութիւններու շրջանցումով կարելի ըլլայ շարունակել կեդրոնի գործունէութիւնը:

Վերահաստատուեցաւ արդէն իսկ որդեգրուած ծրագրերը շարունակելու, աւելի ընդարձակելու հրամայականը:

Լիբանանահայութեան եւ սուրիահայութեան ապրած տաղանայի կացութիւնը անմասն չմնաց ու շարունակեցին ժողովականներուն, որոնք լսեցին հայութեան կարեւոր զարկերակը հանդիսացող այդ գաղութներուն դժուարութիւններուն ու կարիքներուն մասին, կատարեցին համապատասխան քննարկումներ՝ անոնց նեցուկ կանգնելու ձեւերուն վերաբերող:

Իր հնգօրեայ աշխատանքներուն աւարտին, Ընդհանուր ժողովը ընտրեց 2023-2027 քառամեակի ՀՕՄ-ի նոր Կեդրոնական վարչութիւնը՝ հետեւեալ կազմով-

Ընկ. Արուսեակ Մելքոնեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ) - Ատենապետ

Ընկ. Թալին Տաղլեան (Արեւելեան Միացեալ Նահանգներ) - Փոխատենապետ

Ընկ. Նայիրի Պալանեան (Արեւելեան Մ. Նահանգներ) - Քարտուղար



Ընկ. Անի Քէշիշեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ) - Գանձապահ

Ընկ. Իրմա Գասպարեան (Արեւելեան Միացեալ Նահանգներ) - Հաշուապահ

Ընկ. Ժարմէն Միրզախանեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ) - Խորհրդակալ

Ընկ. Արմինէ Կարապետեան (Գանատա) - Խորհրդակալ

Ընկ. Զոյա Քոչարեան (Հայաստան) - Խորհրդակալ

Ընկ. Միրան Ամպարեան (Միջին Արեւելք-Սուրիա) - Խորհրդակալ

Ընկ. Լիզա Չալըգեան-ժիլիպէր (Եւրոպա-Ֆրանսա) - Խորհրդակալ

Ընկ. Նորա Սեւակեան (Աւստրալիա) - Խորհրդակալ

Քաղաքական... Սկիզբը էջ 4

Իրանը շրջափակելու առաջնահերթութեան է: Հեռակայ հաշուով՝ նաեւ Չինաստանի ճանապարհները խափանելու անհրաժեշտութեան է: Այս ճակատներուն վրայ, Արեւմուտքը պէտք ունի Թուրքիոյ, Ազրպէյճանի եւ Իսրայէլի: Այս կէտին վրայ, յիշեալ փոխկապուածութիւնը այնքան սուր է եւ կենսական, որ Արեւմուտքի դեկալարութիւնը պատրաստ է նոյնիսկ աչք գոցելու Հայաստանի եւ Արցախի նկատմամբ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի ցեղասպան քաղաքականութեան վրայ: Եւ բաց է բաց գործիք կանգնելու Իսրայէլի բնաջնջումի գործողութիւններուն Կազախի մէջ: Արեւմտեան ճատրակաւորի դիրքերէն՝ Թուրքիան, Ազրպէյճանը եւ առաջին հերթին՝ Իսրայէլը «գոհելի» են: Բոլոր միւսները (ներառեալ՝ հայերը, քրիտները, պաղեստինցիները) «գոհելի» են: Հայաստանը կրնայ հռչակուիլ իբրեւ արեւմտեան քաղաքակրթութեան գոհարը, բայց ան չի դադրիր Արեւմուտքի կողմէ «գոհելի» ըլլալէ:

Այս առումով եւ իրերու ներկայ դրութեան մէջ, հայկական կողմը վստահելի բարեկամ չունի աշխարհակարգի կառուցչին մէջ: Չունի որեւէ իրական ԱՐՏԱՔԻՆ յենարան իր լինելիութեան ճարտարապետութիւնը կարենայ կառուցելու համար: Չունի մանաւանդ այն պատճառով, որ հայկական կողմը՝ ինք լայնօրէն զրկուած է իբրեւ աշխարհաքաղաքական յենարան հանդէս գալու իրական կարելիութիւններէն այսօր: Ան այլեւս ոչինչ ունի դնելիք սեղանին իբրեւ խաղաթուղթ: Փաշինեանական համակարգը փճացուցած է բանակցային հակակշիռներու մեր գինապահետար: Աշխարհակարգի ուժերը տեղաւորուած են Կովկասի ռազմաբեմին վրայ իրենց նեղ շահերէն զրոյնուած: Շահեր, որոնք իրերու ներկայ դրութեան մէջ սերտօրէն առնչուած են մեր թշնամիներու շահերուն եւ պատրաստ են իրենց առեւտուրը ընելու մեր հաշուոյն: Իսկ մենք ոչինչով կրնանք հակադարձել: Մեր բոլոր լծակները փաշինեանական համակարգին

կողմէ յանձնուած են թշնամիին:

Այս բոլորէն կը հետեւի, որ մենք՝ ինքներս շատ գործ ունինք ընելիք մեր կացութիւնը բարելաւելու ճակատին վրայ: Շատ գո՛րծ՝ տարածաշրջանի խաղաքարտերը կրկին ի նպաստ մեզի վերադասաւորելու մարզին մէջ: Ծակատագրի բնական ընթացքով՝ մենք այլեւս տեղ չունինք տարածաշրջանին մէջ: Մեր տեղը մենք ինքնե՛րս պիտի բանանք մեր իսկ մագիլներով: Եւ հանճարո՛վ:

Մեր Անելիքը

Պէտք է սկսիլ այն բանէն, որ մեր պատմական հայրենիքը մեզի չի կրնար պատկանիլ, եթէ մենք զայն ամէն օր եւ ամէն գնով մերը չընենք: Հասկնալ պատմութիւնը եւ տիրութիւնը ընել մեր պատմական յիշողութեան՝ կենսական մէկ մասն են մեր իրաւագիտակցութեան, բայց անոնք դեռ շատ հեռու են մեր այսօրուան հարցերուն լուծում բերելէ:

Աշխարհակարգը չոր եւ անողորմ յարաբերութիւններու խաղաղաշտն է, ուր կը գործեն կայսերական շահերը: Ժողովրդավարութիւններ չկան այս ոլորտին մէջ: Բարի դրացնութիւնները մակերեսային խօսոյթներ են: Անոնք կը ծածկեն միջպետական յարաբերութեանց իրական գործօնները: Ժողովուրդներու միջեւ մշակութային ջերմ կապերը կը զարգանան, երբ անոնք (իբրեւ ինքնիշխան պետականութիւններ) արդէն ապահոված են իրենց տեղերը աշխարհակարգի տրամաբանութեան մէջ:

Աշխարհաքաղաքական տարածաշրջան մը ինքնիշխան եւ միաժամանակ մէկգծմէ կէ կախեալ պետութիւններու համակարգ մըն է: Շղթայ մը՝ բազմաթիւ օղակներով: Երբեք պէտք չէ մոռնալ շղթայական համակարգերը դեկալարող յայտնի օրէնքը: Շղթայի մը գործութիւնն ու դիմացկունութիւնը հաւասար է իր ամէնէն տկար օղակի տարողութեան: Նոյն օրէնքը կը գործէ նաեւ տարածաշրջաններու ներքին տարերոյթի (dynamics) գործընթացներուն մէջ: Տարածաշրջան կոչուող աշխարհաքաղաքական շղթան երբեք չի հանդուրժեր տկար օղակները: Տարածաշրջանային հաւասար-

ակցութիւնները կը հաստատուին աշխարհաքաղաքական «շղթայ»ին ամէնէն տկար օղակներուն հաշուոյն: Շղթան կը լուծարէ տկար օղակները՝ շղթայի լինելիութիւնը ապահովելով:

Այս առումով, պէտք է հարց տալ, թէ արդեօք այնո՞րս է հայ անկախ պետականութեան պարագան Հարաւային Կովկասի աշխարհաքաղաքական ռազմաբեմին վրայ:

Այն իրողութիւնը, որ ներկայիս մենք մեզ կը գտնենք մեծապէս ականուած կացութեան մը մէջ, երբեք չի նշանակեր, որ փակուղային է մեր վիճակը: Իբրեւ ընդհանուր սկզբունք՝ իրավիճակ մը փակուղային է, երբ մենք՝ ինքնե՛րս մեր մտքերը դրած ենք փակուղիի մէջ... Կամ թոյլ տուած, որ անոնք փակուղիի մէջ գրուին ուրիշներու դաւադրական միջամտութեամբ: Բա՛ն մը, որ վերջին պատերազմի էութիւնն իսկ էր:

ԱՎ-օրեայ պատերազմին նպատակը հայկական կողմի ռազմական պարտութիւնը չէր միայն: Ան ծրագրուած էր հոգեբանական պատերազմի մասնագէտներուն կողմէ անգործութեան մատնելու մեր ժողովուրդին միտքը եւ յատկապէս անոր վերնախաւի քաղաքակա՛ն միտքը: Նպատակն էր թշնամիի ռազմական յաղթանակը վերջնականօրէն ամրագրել՝ ազգը բարոյապէս եւ քաղաքականապէս անդամաւորեցնելով: Պարզ խօսքով, մզելով մեզ հաւատալու, որ աշխարհակարգի կառուցչին մէջ տեղ չկայ հայ անկախ պետականութեան համար (դո՛ւրս Պերլինէն, վերադարձէ՛ք Պոլիս):

Բարեբախտաբար իրականութիւնը այդպէս չէ: Աշխարհակարգը ձեւաւորող կայսերական ուժերը եւ առաջին հերթին՝ Միացեալ Նահանգներ, Ռուսիա, Եւրոպա, Թուրքիա, Իրան եւ Իսրայէլ անճկելի զանգուածներ են: Անոնք կ'ապրին ներքին քաղաքական հակասութիւններով եւ կնճիռներով: Անոնք բոլորն ալ ունին աքիլլէսեան կրունկներ, Անոնք բոլորն ալ ենթակա են սակարկութեան:

Մեր խնդիրն է մտնել այդ բարդ տրեգիքներ մէջ ազդու գէնքերով: Այս առումով, եթէ մեր լինելիութեան սպառնացող վտանգը կայսերական է իր բնոյ-

թով, ուրեմն մեր հակադարձութիւնն ալ պիտի ունենայ նոյն կայսերական որակները: Քաջ գիտնալո՛ւմ, որ ռազմադաշտին մէջ գործողը լոկ գէնքերը չեն: Զինուորները չեն: Այլ այդ բոլորը համադրող եւ համակարգող լծակային ուժերը (leverage):

Ըստ Հայկական Սովետական Հանրագիտարանին, լծակը (lever, levier) այն գործիքն է (ինչպէս Խրիմեան Հայրեկի երկաթէ շերտիլը որով փոքրագոյն ուժով կարելի է հակակշռել մեծագոյնը: Ներկայիս այդ կարողականութիւնները կը գտնուին սխալ ձեւերու մէջ: Լծակային կարողականութիւնները մեր երկրին մէջ խլուած են փաշինեանական համակարգին կողմէ եւ անոնք կը հակակշռեն ԱԶԳԻՆ ուժը փոխանակ հակակշռելու ուժը թշնամիին՝ ՄԵՐ թշնամին տարածաշրջանի ճակատագիրը ճշդօղ միջկայսերական ուժերու համակարգն է, որ կեցած է Ազրպէյճանի եւ Թուրքիոյ ետին: Իսկ փաշինեանական համակարգի թշնամին (իրերու տարերային դասաւորումով) ԱԶԳԻՆ է՛ Առակա ի՞նչ ցուցանէ:

Առակա ցուցանէ այն, որ ազգը իր մէջ պիտի գտնէ անհրաժեշտ կամքն ու ուժը ինքնիր վախերն ու թուլակամութիւնը յաղթահարելու եւ փաշինեանական համակարգը արագօրէն ու վճռականօրէն դուրս բերելու իշխանութեան դիրքերէն: Առանց այդ վերահաստատութեան, այսինքն՝ առանց իրաժէք իշխանափոխութիւն իրագործելու, ոչինչ կրնայ կասեցնել մեր հաւաքական գահավէժը: Իշխանափոխութեան գործը առաջին շփման գիծն է մեր լինելիութեան պատերազմին: Առանց այդ ճակատագրական հանգրուանը նուաճելու ոչինչ կարելի է իրագործել: Առանց այդ ճակատամարտը շահելու՝ մենք ինքնաբերաբար կ'ընդունինք աշխարհակարգի վճիռը պատմութեան բեմէն միանգամընդմիջտ դուրս գրուելու:

Իսկ այդ վճռական գրոհը կը պահանջէ բոլորովին նոր ռազմավարութիւն, նոր տեսիլք եւ անսահման քաջութիւն անկոխ գետիններէն հաշուի նստելու թշնամիին հետ: Տէր ընդ մեզ:

Փաշինեան Եւրոխորհրդարանին Մէջ Կը պարծենայ Հայաստանի Կեդժ Ժողովրդավարութեամբ

Անկախ անկէ՝ ինծի հաճելի է Հայաստանի վարչապետը, թէ ոչ, կ'ուզեմ արդար ըլլալ անոր նկատմամբ: Ես կը գովեմ զայն, երբ ան բան մը ճիշդ կ'ընէ եւ կը քննադատեմ՝ որեւէ բան սխալ ընելու պարագային: Օրինակ՝ Ապրիլ 2019ին Նիկոլ Փաշինեանը գովաբանող յօդուած մը գրեցի՝ Ֆրանսայի Սթրասբուրգի քաղաքին մէջ Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին մէջ (ԵՆՆՎ) անոր ունեցած ելոյթին առիթով: Ահա թէ ինչ գրած էի այդ ժամանակ. «Փաշինեան տպաւորիչ ելոյթ ունեցաւ եւրոպական 47 երկիրներու ներկայացուցիչներու

առջեւ: Առաւել տպաւորիչ էին վարչապետին պատասխանները՝ անոնց տասնեակ հարցումներուն: Մինչ անոր ելոյթը նախապատրաստուած էր, հարցերը յանպատրաստից էին, եւ պատասխանները պէտք է տրուէին տեղւոյն վրայ»:

Փաշինեան իմ յօդուածը հրատարակեց իր ֆէյսպուքեան էջին մէջ, որ աւելի քան մէկ միլիոն հետեւորդ ունի: Ահա անոր աւելցուցած մեկնաբանութիւնը. «Ուրախ եմ, որ սփիւռքի ամէնէն հեղինակաւոր թերթերէն մէկը՝ «Քալիֆօրնիա Քուրիըր»ը, այսպէս գնահատած է ԵՆՆՎ-ի մէջ իմ ունեցած ելոյթը»: Իմ յօդուածը ստացած է 4000 հաւանութիւն, 197 բաժնեկցութիւն եւ 185 մեկնաբանութիւն:

Այժմ ես կը մեկնաբանեմ Փաշինեանի ելոյթը, որ ան ունեցած է Եւրոխորհրդարանին մէջ (Սթրասբուրգի, Ֆրանսա) 17 Հոկտեմբեր 2023ին:

Փաշինեան իր ելոյթին մէջ 21 անգամ օգտագործեց «ժողովրդավարութիւն» կամ «ժողովրդավարական» բառերը՝ Հայաստանի ներկայ իշխանութիւնը բնութագրելու համար:

Ան ընդգծեց, որ ժողովրդավարութիւնը կ'ապահովէ «անվտանգութիւն, խաղաղութիւն, միասնակաւորութիւն, բարեկեցութիւն եւ երջանկութիւն»: Ցաւօք, Հայաստան այս յատկանիշներէն եւ ոչ մէկը կը վայելէ, քանի որ Արցախը կորսուած է, իսկ ատրպէյճանական զօրքերը 2021էն ի վեր հաստատուած են Հայաստանի սահմաններէն ներս:

Հայաստանի խնդիրները առաւելապէս պայմանաւորուած են անոր ղեկավարին անկարողութեամբ: Փաշինեան իշխանութեան եկաւ ժողովրդավարական արժէքներ քարոզելու քողին տակ, բայց վերջաւորութեան խախտեց ժողովրդավարութեան հիմնարար սկզբունքները: Այն, ինչ որ հիմա ունինք Հայաստանի մէջ, միանձնեայ իշխանութիւն է: Փաշինեան ոչ ոքի կը լսէ՝ ըլլալ նախարար, խորհրդակցական, իրեն կուսակից, խորհրդարանական մեծամասնութիւն, թէ նախագահ: Ան միայնակ կը կայացնէ բոլոր որոշումները: Ան իր ելոյթին մէջ պնդեց, որ Հայաստան «պարզապէս կաթուածահար կ'ըլլար, կը կորսնցնէր իր անկախութիւնն ու

ինքնիշխանութիւնը, եթէ չըլլար ժողովրդավար»:

Փաշինեանը կեղծօրէն ըսաւ, որ իր կառավարութիւնը «չէ խախտած ժողովրդավարութեան որեւէ սկզբունք»: Փաստը այն է, որ Փաշինեան Հայաստանը վերածած է ոստիկանական պետութեան: Ան երբ առաջին անգամ իշխանութեան հասաւ, դէպի վարչապետի նստավայր հեծանիւով կ'երթար: Այժմ կը թաքնուի հարիւրաւոր ոստիկաններու ետեւը, նախքան ոտքը դուռէն դուրս հանելը: Բարձր աշխատավարձեր եւ պարգեւավճարներ ստացող ոստիկանները կը ձեռնէ եւ կը ձերբակալեն ցուցարարներ: Փաշինեանի քաղաքական հակառակորդները կ'ամբաստանուին դատարանի մէջ, չինձու մեղադրանքներով: Ան զինք քննադատողներուն սպառնացած է «փռել ասֆալթին» եւ «ձեփել պատերուն»:

Անհաւատալիօրէն, Յունիս 2021ին, խորհրդարանական ընտրութիւններու քարոզարշաւի ժամանակ, ան մուրճ կը ճօճէր օդին մէջ՝ սպառնալով ջարդել զուլիները իր ներքին հակառակորդներուն: Մի՞թէ այս ժողովրդավարութիւն է:

Նոյնիսկ սփիւռքահայերը գերծ չեն մնացած Փաշինեանի բռնապետական վարչակարգի երկար ձեռքէն: Հայաստանէն դուրս գայն քննադատողներուն արգելուած է մուտք գործել հայրենիք, երեւանի օդակայան ժամանելէ ետք: Ի՞նչ պատահած է խօսքի ազատութեան ժողովրդավարական սկզբունքին:

12 Մայիս 2021ին, Ատրպէյճանի յարձակումը Հայաստանի վրայ Փաշինեան որակեց իբրեւ «սաղարանք, որ տեղի ունեցաւ խորհրդարանական ընտրութիւններէ առաջ մօտալուտ խորհրդարանական ընտրութիւնները ձախողեցնելու եւ Հայաստանի պետականութիւնը կաթուածահար ընելու, կամ, առնուազն, դրանոյ կառավարութիւնը կազմելու նպատակով»: Փաստը այն է, որ Ատրպէյճանի յարձակումը Հայաստանի վրայ կապ չունէր խորհրդարանական ընտրութիւններուն հետ: Նման յարձակումներ եղած են ընտրութիւններէ առաջ եւ յետոյ: Աւելի՛ն, Ալիեւ Փաշինեանը տապալելու պատճառ չունի, քանի որ ան անվերջ զիջումներ կ'ընէ Ատրպէյճանին, Արցախի եւ Հայաստանի հարցով:

Փաշինեան իր ելոյթին մէջ պարծեցաւ, որ Հայաստան կրցած է տեղաւորել Արցախի 100 հազար գաղթականները. ան պնդեց, որ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան շնորհիւ «մենք այդ գործը պատուով կատարեցինք»: Փաստը այն է, որ հակառակ տարիներ շարունակ հնչող յամառ տեղեկութիւններուն, թէ Ատրպէյճան մտադիր է բռնադրակել Արցախի մնացած մասը եւ դուրս հանել անոր բնակիչները, Հայաստանի կառավարութիւնը որեւէ նախապատրաստութիւն չէր տեսած գաղթականները Հայաստանի մէջ բնակեցնելու

համար: Անոնցմէ շատեր օրեր անցուցած են իրենց մեքենաներուն մէջ՝ զրկուած սնունդէ, ջուրէ եւ կացարանէ: Հետեւանքը այն եղած է, որ քանի մը հազար արցախցիներ արդէն լքած են Հայաստանը:

Իր ելոյթին մէջ Փաշինեան բացատրած է իր պատրաստակամութիւնը՝ թոյլ տալ ատրպէյճանական բռնորոշ, մեքենաներու, մարդոց, խողովակաշարերու եւ ելեկտրագիծերու անցումը Հայաստանի տարածքով, Ատրպէյճանէն դէպի Նախիջեւան: Թէեւ կ'ենթադրուի, որ նման մուտք մը փոխադարձ է, ինչպէս նշուած է 9 Նոյեմբեր 2020ի համաձայնագրին մէջ, Ատրպէյճան սակայն երբեք չէ յայտնած իր պատրաստակամութեան մասին՝ թոյլ տալ հայերու համար նմանատիպ տարանցում Ատրպէյճանի տարածքով: Նոյն անհամաձայնութիւնը կը վերաբերի Փաշինեանի կողմէ Ատրպէյճանի 86 հազար 600 քառակուսի քիլոմետր տարածքի ճանաչման՝ առանց Ալիեւի համաձայնութեան՝ ճանչնալու Փաշինեանի առաջարկած 29 հազար 800 քառակուսի քիլոմետր տարածքը: Փաշինեան նաեւ խոստովանեցաւ, որ Հայաստանի տարածքին մէջ գտնուող նախկին ատրպէյճանաբնակ enclave-ները կը պատկանին Ատրպէյճանի՝ առանց Ալիեւի փոխադարձ փոխանակման ընդունման:

Ի վերջոյ, Փաշինեան կրկնեց Ատրպէյճանի հետ մինչեւ տարեկան խաղաղութեան պայմանագիր կնքելու իր առաջարկը. թէեւ նման պայմանագիրը անհրաժեշտութիւն չկայ, քանի որ Հայաստան եւ Ատրպէյճան միմեանց դէմ պատերազմ չեն յայտարարած: Խաղաղութեան պայմանագիրը միայն կարելիութիւն կը ստեղծէ Ատրպէյճանի՝ հետագայ զիջումներ կորզելու համար Հայաստանէն:

Փաշինեան իր 45 վայրկեաննոց ելոյթը եզրափակեց երկու անգամ եւս կրկնելով «ժողովրդավարութիւն» բառը. «Ես համոզուած եմ, որ ժողովրդավարութիւնը կրնայ ապահովել խաղաղութիւն, անվտանգութիւն, միասնութիւն, բարեկեցութիւն եւ երջանկութիւն: Եկէք միասին այս ապացուցենք: Կեցցէ՛ ժողովրդավարութիւնը»:

Եւրոխորհրդարանի պատգամաւորները չափազանց գոհ էին Փաշինեանի ելոյթէն: Ինչո՞ւ գոհ պիտի չըլլային: Փաշինեան կը բաւարարէ Արեւմուտքի, Ռուսիոյ, Ատրպէյճանի եւ Թուրքիոյ շահերը, որ է՝ Արցախէն հրաժարուած՝ ատրպէյճանական բնական նաւթի (մասամբ Ռուսիայէն գնուած) հոսքը դէպի Եւրոպա դիւրացնելու նպատակով: Բացի կարեկցական խօսքերէ, Եւրոխորհրդարանի անդամները Հայաստանի համար որեւէ յստակ բան չեն ուզեր ընել:

Ես համոզուած եմ՝ Փաշինեան այս յօդուածը չի հրատարակեր ֆէյսպուքեան իր էջին մէջ: Յարութ Սասունեան

Նախարար Մելանի Ժողի Գերկայութեամբ Երեւանի մէջ տեղի ունեցաւ Գանատայի դեսպանատան քացումը

Հոկտեմբեր 25-ին Երեւանի մէջ կայացաւ դեսպանատան քացման հանդիսաւոր արարողութիւնը, Գանատայի Դրօշը բարձրացուցին շէն-ի մէջ Գանատայի արտակարգ եւ լիազօր դեսպան էնտրու Թըրըրըն ու Գանատայի արտաքին Գործոց նախարար Մելանի Ժոլին:

Ժոլի Հայաստանի մէջ Գանատայի դեսպանութիւն բանալու մասին յայտարարած էր 2022 թուականի Յունիս 29-ին: Այդ ժամանակ նշուած էր, որ դիւանագիտական ներկայացուցչութեան ստեղծումը առիթ կ'ընծայէ ամուր կապեր հաստատելու 2 երկիրներուն միջեւ եւ զարկ տալու Գանատայի աջակցութեան հայաստանեան ժողովրդավարութեան:

Նոյն օրը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հանդիպման ընթացքին, նախարար Ժոլի ըսաւ. «Ես համոզուած եմ, որ պարոն վարչապետը Օթթուալէն նոյնպէս մտովի եւ սրտով դեսպանատան բացումը մեզի հետ միասին կը տօնէ: Ուրախ ենք, որ Հայաստանի մէջ ունինք առաջին դեսպան, որ լավ կը ճանչնայ Հայաստանը, որովհետեւ ան երկար ժամանակ աշխատած է Հայաստանի գծով արտաքին յարաբերութիւններու վարչութեան մէջ: Ան նաեւ մեր երկրին մէջ ձեռք հրաշալի դեսպանին մտերիմ ընկերն է, որ նոյնպէս հիմա մեզի հետ է»:

Այցելութիւն Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր

Պաշտօնական այցով Հայաստան ժամանած Գանատայի ԱԳ նախարար Մելանի Ժոլիի գլխավորած պատուիրակութիւնը Հոկտեմբեր 25-ին այցելեց Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրը՝ ՀՀ ԱԳ նախարար

Արարատ Միրզոյեանի եւ ՀՀ-ի մէջ Գանատայի արտակարգ եւ լիազօր դեսպան էնտրու Թըրըրի ուղեկցութեամբ: Երկու երկիրներուն նախարարները ծաղկեպսակներ դրած են Հայոց ցեղասպանութեան զոհերուն յիշատակը յաւերժացնող յուշակոթողին, այնուհետեւ հիւրերը ծաղիկներ դրած են անմար կրակին մօտ եւ մէկ վայրկեան լռութեամբ յարգած են Հայոց ցեղասպանութեան անմեղ զոհերուն յիշատակը:

«Գանատան կ'աջակցի Հայաստանի տարածքային ամբողջականութեան»

Գանատան կ'աջակցի Հայաստանի տարածքային ամբողջականութեան: Այս մասին Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործոց նախարարին հետ մամուլի միացեալ ասուլիսին ընթացքին յայտարարած է Գանատայի Արտաքին գործոց նախարար Մելանի Ժոլի: «Ատրպէյճանի իշխանութիւններուն կողմէ կ'ողորմեցնէ յարգելու Լեռնային Ղարաբաղէն տեղահանուած հայերու վերադարձի իրաւունքը», ըսաւ Գանատայի Արտաքին գործոց նախարարը:

Մելանի Ժոլի նաեւ ըսաւ, որ Գանատան պիտի աւելցնէ մարդասիրական աջակցութիւնը Լ,Դ-էն հետեւցած ժողովուրդին՝ հասցնելով այդ գումարը 3,9 միլիոն տոլարի: Անոր մէջ ներառուած է լրացուցիչ 1 միլիոն տոլարի ֆինանսաւորումը ՄԱԿ-ի փախստականներու գերագոյն յանձնակատարի գրասենեակին՝ մարդկային կեանքեր փրկող աջակցութեան նպատակով: Եւս 2,5 միլիոն տոլարի ֆինանսաւորում Կարմիր Նաչի Միջազգային Կոմիտէին, որ կ'օգնէ մեղմելու տառապանքը եւ հրատապ խնամք կազմակերպելու այն մարդոց համար, որոնք կարիք ունին:

Նշենք, որ Հայաստանի մէջ նախարարի բոլոր հանդիպումներուն եւ միջոցառումներուն ներկայ էին Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութիւնէն Սարո Տէր Պետրոսեան եւ Սեւակ Պելեան:

Գանատան Հայաստանի մէջ Ե. Միութեան դիտորդական առաքելութեան մասնակից

Գանատայի Արտաքին գործոց նախարար Մելանի Ժոլի Հոկտեմբեր 26-ին այցելեց Ջերմուկ, ուր նախեւառաջ այցելեց Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան գրասենեակ:

Ժոլի Եւրոպական Միութեան դիտորդներուն հետ հանդիպման ընթացքին ըսած է. «Շատ հաճելի է Ջերմուկ գտնուելը՝ աւելին իմանալու այն աշխատանքին մասին, զոր կատարած է Եւրոպական Միութիւնը, որուն կը միանայ Գանատան: Գանատան Եւրոպական Միութեան ոչ անդամ առաջին երկիրն է, որ կը միանայ այս առաքելութեան»:

Գանատայի Արտաքին գործոց նախարարը նաեւ այցելեց մարտական դիրքեր, ինչպէս նաեւ հանդիպում ունեցաւ Արցախէն բռնի տեղահանուած քաղաքացիներու հետ: Նախարարը Թուրքիոյ վրայ հրատարակեց նկարներ եւ գրառում կատարեց, ուր կ'ըսուի «Ինծի համար կարեւոր էր լսել եւ իմանալ Հայ կիներէն, որոնք փախած են Լեռնային Ղարաբաղէն: Զիս յուզեցին անոնց ուժն ու քաջութիւնը: Գանատան կը շարունակէ կանգնել Լեռնային Ղարաբաղի բնիկ Հայ ժողովուրդին եւ անոնց անվտանգ վերադարձի իրաւունքին կողքին»:



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ձ. ՏԱՐԻ, Թիւ 12, Նոյեմբեր 2023



ԶԳՈ՛ՅՇ ԶԽԱԹԱՐԵԼ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Դուն ինչ՞ու եղբայրդ կը դարձես, ինչո՞ւ կ'արհամարհես եւ կը բամբասես. ահաասիկ դարձաւորը դրան առջեւ է եւ կը հարուցանէ իւրաքանչիւրը ըստ իր գործերուն»:
(Յովհան Մանդակունի)

Այսօրուան քաղաքակիրթ աշխարհին մէջ կարծէք շատ բնական դարձած է բամբասանքը, սուտ վկայութիւնը, անհիմն տեղեկութիւններ տարածելը եւ զրպարտութիւնը, որոնք միայն ու միայն կը վնասեն ու կ'արատաւորեն մեր նկարագիրը:

Թոյլ տուէք կեդրոնանամ **բամբասանքին** վրայ, որ այս օրերուն տարածուած հիանդագին երեւոյթ դարձած է:

Բամբասանքը ժխտական երեւոյթ է եւ անբնական հետեւանքներ ունի: Բամբասանքը միայն խաբուսիկ բարեկամութիւն մը կը հաստատէ շրջապատին մէջ, սակայն դժբախտաբար շատ կարճ կը տեւէ եւ շուտով կը մերժուի նոյն շրջապատին կողմէ: Այո՛ր, բամբասանքը կը ոչնչացնէ յարաբերութիւնները, կը նուաստացնէ հեղինակութիւնը եւ կը վիրաւորէ սրտերն անոնց՝ որոնք թիրախաւորուած են:

Առակաց գրքի հեղինակը իր 4-րդ գլխուն 23-րդ համարին մէջ կը յիշեցնէ իւրաքանչիւրիս, հեռու մնալ բամբասանքներէ, պահպանելու համար մեր սիրտը, լեցնելով զայն սիրով, կարեկցանքով եւ շնորհքներով:

Պօղոս Առաքեալ Եփեսացիներուն ուղած իր նամակին 4-րդ գլխուն 15-րդ համարին մէջ կը քաջալերէ մեզ «խօսիլ ճշմարտութիւնը սիրով»: Եթէ ինչ որ մէկու մը բնատրուական, արարքներուն հետ կապուած մտահոգութիւններ ունինք, պէտք է սիրով անդրադառնանք եւ ոչ թէ բամբասանքով եւ զրպարտանք տարածելով: Քաջ պէտք է գիտնանք, որ մեր լեզուն շատ փոքր է, բայց կարողութիւնը ունի բուժելու եւ կամ ցաւ պատճառելու, կեանք տալու եւ կամ մահուան դատապարտելու:

Եթէ Քրիստոսի հետեւորդներ ենք, եթէ մենք մեզ քրիստոնէայ կ'անուանենք, ցոյց տանք մեր սիրով, անարատութեամբ եւ ոչ թէ մեր մասնակցութեամբ կործանարար բամբասանքներու: Սաղմոսասաց վարդապետը հետեւեանքը կ'ըսէ. «Թող իմ բերանի խօսքերը եւ սրտիս խորհուրդները քու առջեւ ընդունելի ըլլան, ո՛ր վ Տէր, իմ Վէմս եւ Փրկիչս» (19:14): Ծիշո՛ղ է որ բամբասանք կատարողը երբեմն մեծամտութենէ եւ սնամտութենէ մղուած կը փորձէ ուրիշներուն մօտ շատ բան գիտցած ըլլալու մեծ տպաւորութիւն մը ձգել: Սակայն վստահ գիտցէք որ ժամանակաւոր տպաւորութիւն մըն է, շուտով ան ենթակայ կ'ըլլայ անտեսման, հեռացման եւ մեկուսացման: Երբ կրակը հանդարտ է եւ մոխիր դարձած, պէտք չէ նոր փայտեր նետել կրակը բորբոքելու համար: Առակաց գրքի հեղինակը դարձեալ կ'ըսէ. «Ով որ կը զսպէ իր լեզուն, խելամիտ է»: Պէտք է սորվինք կառավարել մեր լեզուները ու ինքնատիրապետել, կասեցնելու մեր մէջ բամբասելու ցանկութիւնը: Դարձեալ Պօղոս Առաքեալ այս անգամ Փիլիպեցիներուն ուղղած իր նամակին 4-րդ գլխուն 8-րդ համարին մէջ կը բացատրէ, որ մենք կոչուած ենք մտածելու «ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պատուական է, ինչ որ արդար է, ինչ որ մաքուր է, գեղեցիկ եւ գովելի»:

Մէկ խօսքով **յաղթահարենք բամբասանքի Գայթակղութեան:**

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնց. այս սկզբունքը իր մէջ կը խափացնէ Օրէնքն ու մարգարէներու ուսուցումը»:
(Մատթէոս 7.12):

Մարդկային կեանքը հիմնուած է փոխյարաբերութեան վրայ: Երբեմն նեղ շրջանակի վրայ, իսկ շատ անգամ՝ լայն: Մարդկային փոխյարաբերական կեանքին մէջ ամէնէն շատ գործածուող բառերը «ԵՍ» եւ «ՄԵՆՔ» դերանուններն են:

«Մարդ մարդով է»: «Մէկս միւսին համար ստեղծուած ենք»:
«Այսօր կարգդ է, վաղը՝ իմ»: Այս նախդասութիւնները յաճախ կը լսենք: Ծիշո՛ղ են եւ իրաւացի: Մարդը ընկերային արարած ըլլալով, չի կրնար անմասն մնալ ընկերային կեանքէն:

Իւրաքանչիւր անձ, եթէ իր կեանքին ընթացքին իր նմանին մէջ ինքզինք կը տեսնէ, այլ խօսքով ինքզինք հաւասար կը նկատէ իր նմանին, բնականաբար կեանքի բոլոր բարդոյթները իրենց դարմանը կը գտնեն: Իսկ մարդկային փոխյարաբերական կեանքը կը գտնէ իր արդիւնաբեր ընթացքը:

Երբ կը մտածենք միայն մեր «ԵՍ»ին մասին կը դառնանք եսամոլ եւ «ԵՍ»ին գերին: Այս պարագային փոխանակ սիրելու կը սկսինք ատել, ընտանեկան կամ ընկերային խաղաղութիւնը կը պղտորի եւ կոհիւր կը դառնայ մնայուն վարուելակերպ:

Ինչպէ՞ս կարելի է ձերբազատիլ «ԵՍ»ի տիրապետութենէն:

Սէրը անհրաժեշտ ազդակն է: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. **«Սէր ունեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւատայ, միշտ կը յուսայ եւ միշտ կը համբերէ»** (Ա. Կորնթացիներուն 13.7): Եթէ զիջողական ըլլանք, եթէ հաւատանք մէկս միւսին, եթէ յոյսը մնայուն տեղ ունենայ մեր սրտերուն մէջ, եթէ համբերատար ըլլանք, բնականաբար կը սկսինք «ԵՍ»ի տիրապետութենէն դուրս ելլել եւ համայնական ու ընտանեկան շահերը կը դառնան գերիվեր:

«Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնց. այս սկզբունքը իր մէջ կը խափացնէ Օրէնքն ու մարգարէներու ուսուցումը» (Մատթէոս 7.12): Քրիստոսի փոխանցած ոսկեայ կանոնն է այս, որ կը լուծէ ամէն հարցերը եւ կը կարգաւորէ մարդկային ու ընկերային կեանքը:

Շեշտաբար վարուինք այնպէս, ինչպէս կ'ուզենք որ մարդիկ վարուին մեր հետ: Սէրը թող տիրէ մեր կեանքին մէջ: Շեշտ մնանաք անձնական շահեր հետապնդելէ: Կարեւորը միայն «ԵՍ» չեմ, կարեւորը շրջանակս է՝ «ՄԵՆՔ» ենք: Անդրադառնանք, որ միւսակ չենք այս աշխարհի վրայ, նոյն աշխարհին վրայ կ'ապրին նաեւ մեր «նման»ները, մեր ազգակիցները, մեր հայրենակիցները:

Կոչուած ենք զիրար ամբողջացնելու, որովհետեւ **«մարդ մարդով է», «մէկս միւսին համար ստեղծուած ենք», «այսօր կարգդ է, վաղը՝ իմ»:**

ՀԱՅՐ ՅԱԿՈՐ

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

«Եղբայրներ, դուք ձեզ շատ երջանիկ համարեցէք, երբ զանազան փորձութիւններու մէջ կ'իյնաք: Գիտցէք, որ փորձութիւնը համբերութիւն կը ծնի, եթէ ձեր հաւատքը փորձին դիմանայ: Իսկ համբերութիւն պէտք է ունենալ մինչեւ վերջ, որպէսզի ամբողջական եւ կատարեալ ըլլաք, եւ ձեզի ունէ բան չպակսի»:

Յակոբոս 1.2-4

“My brothers, whenever you face trials of any kind, consider it nothing but joy, because you know that the testing of your faith produces endurance; and let endurance have its full effect, so that you may be mature and complete, lacking in nothing.”

James 1:2-4





ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԵԼ

Սողոմոնի մահէն ետք իսրայէլացիներու մէջ վէճ սկսաւ թագաւորական գահին տիրելու համար. երկիրը բաժնուեցաւ երկու մասի, եւ ամէն մէկը իր թագաւորը ունեցաւ: Մարդիկ հեռացան ճշմարիտ Աստուծմէ եւ սկսան պաշտել կուռքեր, որոնք պատրաստուած էին փայտէ կամ քարէ:

Թագաւորներէն մէկը՝ Աքաաբ կը պաշտէր Բահաղ անունով կեղծ աստուած մը, որ երկնքի եւ անձրեւի չաստուածն էր: Աստուած Եղիա մարգարէն ուղարկեց Աքաաբի մօտ զինք սաստելու համար: Եղիան ըսաւ թագաւորին.

- Կ'երդնում ճշմարիտ Աստուծոյ անունով, որ յաջորդ տարիներուն երկրի վրայ անձրեւ պիտի չգայ: Ասիկա քեզի համար պատիժ պիտի ըլլայ, քանի որ կուռքեր կը պաշտես եւ հեռացած ես ճշմարիտ Աստուծմէ: Ինչպէս որ Եղիան ըսաւ, այդպէս ալ եղաւ. Երեք տարի ընդհանրապէս անձրեւ չեկաւ. Ոչինչ աճեցաւ, բոլոր բոյսերը չորցան, եւ մեծ սով եղաւ:

Աքաաբ թագաւորը զայրացած էր Եղիայի վրայ: Աստուած Եղիային ըսաւ. «Գնա՛ւ եւ թաքնու՛մք Աքաաբէն»: Աստուած զինք առաջնորդեց դէպի Քոռաթի հեղեղատը: Աստուած Եղիային ազուաներ կ'ուղարկէր, որպէսզի առաւօտեան եւ երեկոյեան անոր հաց ու միս բերեն, իսկ հեղեղատէն ան կը կարողանար ջուր խմել:

Աստուած Եղիային ըսաւ. «Ելի՛ր եւ գնա՛ Սարեփթա քաղաքը եւ հրո՛ւ մնա: Այնտեղ այրի կին մը քեզի հոգ պիտի տանի»:

Երբ Եղիան քաղաքի դարպասներուն մօտ հասաւ, տեսաւ այրի կին մը, որ փայտ կը հաւաքէր: Ձայն տուաւ անոր եւ ըսաւ.

- Կը խնդրեմ, ինձի գաւաթ մը ջուր տուր խմելու եւ կտոր մը հաց՝ ուտելու:

- Ես ընդհանրապէս հաց չունիմ, բացի սափորին մէջ եղած բոու մը ալիւրէն եւ ամանին մէջ մնացած քիչ մը ձէթէն: Եկայ այստեղ, որ երկու կտոր փայտ հաւաքեմ, տանիմ տուն, որ ինձի եւ գաւակիս համար բան մը պատրաստեմ այս բոլորէն, որ ուտենք եւ յետոյ մեռնինք, ըսաւ կինը:

Եղիան անոր ըսաւ.

- Մի՛ նեղուի, գնա՛ւ եւ ըրէ՛ այն, ինչ որ ըսիր, միայն թէ նախ ինձի համար քու ալիւրէդ փոքրիկ բաղաճը մը պատրաստէ եւ բեր, յետոյ քեզի եւ գաւակիդ համար, որովհետեւ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, ինձի հետեւեալն է խոստացեր. «Ալիւրով սափորը պիտի չդատարկուի, եւ ամանին ձէթը պիտի չպակսի մինչեւ այն օրը, երբ կրկին անձրեւ ուղարկեմ»:

Կինը գնաց եւ ինչ որ Եղիան իրեն ըսեր էր այդպէս ալ ըրաւ: Եւ այսպէս ինք, կինը եւ անոր որդին երկար օրեր կերան. Ալիւրով սափորը չէր դատարկուեր, եւ ամանին ձէթը չէր պակսեր:

ՊԱՏԱՆԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

FORGIVENESS

The freedom in a simple act of forgiveness saves the expense of anger and the high cost of hatred. Forgiveness can buy peace of mind. Think of everything that has ever been directed at you for which you bear grudges or hostility. Every hurt or sting is like being bitten by a snake. You rarely die from the injury, but once bitten, it is impossible to be unbitten, and the damage is done by the venom that continues to flow through your system. The venom is your bitterness and hatred that you hang on to, long after you've been hurt. It is this venom that will ultimately destroy your peace of mind.

The antidote is forgiveness, which is not as difficult as you may want to believe. If you believe that forgiveness is challenging and conflict-ridden act that you have to struggle with for a lifetime, I suggest quite the opposite is true. Forgiveness is joyful, easy, and, most of all, exceedingly freeing. It relieves us of the burdens of resentment and past grievances and is just another word for simply letting go. When we learn to pardon, we rise above those who have insulted or aggrieved us, and this act of forgiveness puts an end to the quarrel.

WAYNE W. DYER



ԽԱՉՔԱՐ

Տատակների, քարերի մէջ Քամիների, արեւի մէջ, Ձիւների մէջ, շոգ ու տոթի, Այսպէս մենակ, այսպէս ոտի, Այսպէս խոնարհ, այսպէս ըմբոստ, Այսպէս փխրուն, այսպէս շիտակ. Այսպէս խրթին ու այսպէս պարզ Կազնել է նա երկնքի տակ... Կանգնել է նա արեւի դէմ, Որպէս թախիժ ու խղճի սին, Կանգնել է նա դարերի դէմ, Որպէս խաչուած գեղեցկութիւն...

ՎԱՀԱԳՆ ԴԱԹԵԱՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿՐ ԽՕՍԻՆ

ՇՆՈՐՀՔՆ ՈՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԻԱՅՆ ՏԻՐՈՋ ԿԱՌՉԻԸ (ԲԱԺԻՆ Ա.)

«Աստուծոյ խոստումներն ու մարգարէութիւնները կը կատարուին զանգան փորձութիւններու եւ դառնութիւններու միջոցաւ, եւ բոլոր անոնք, որոնք միայն Տիրոջ կը կատարեն՝ կը փրկուին չարին փորձութենէն»:

Շնորհքին ներգործութեան կանոնը

Աստուծոյ շնորհքին ներգործութիւնը մարդուն մէջ մեծ համբերութեամբ, իմաստութեամբ եւ ծածուկ կարգաւորութեամբ կը գործէ: Եւ այդ ընթացքին, մարդը երկար ժամեր մեծ համբերատարութեամբ կը պայքարի, որմէ ետք միայն անոր կը յայտնուի, թէ իր մէջ գործողը շնորհքին կատարեալ աշխատանքն է, յատկապէս՝ երբ անոր կամքը բազմաթիւ քննութիւններով կ'ապացուցուի եւ կը դառնայ բացորոշ, որ ան հաճելի է Սուրբ Հոգիին: Այսպիսով, մարդը բաւական երկար ժամանակ համբերատարութիւն եւ հաստատակամութիւն ցոյց տուած կ'ըլլայ: Աստուածաշնչակաւ օրինակներով պիտի յայտնենք, թէ այս է շնորհքին ներգործութեան կանոնը:

Շնորհքին ներգործութեան կանոնը

Այն՝ ինչ որ ըսել կ'ուզեմ, յստակ կերպով կը բացայայտուի Յովսէփի կեանքի դրուագին մէջ: Բաւական երկար ժամանակ տեսց, մինչեւ որ Յովսէփի առնչուած Աստուծոյ կամքն ու մտադրութիւնը իրականանան եւ կատարուի անոր տեսած տեսիլը: Ան սաստիկ ցաւերով ու տրտմութիւններով փորձութեան ենթարկուեցաւ եւ բոլորն ալ համբերութեամբ կրեց: Այդ բոլոր քննութիւններուն մէջ ան ի յայտ եկաւ իբրեւ Աստուծոյ հաւատարիմ ու կատարեալ ծառան, որմէ ետք միայն Եգիպտոսի վրայ թագաւոր կարգուեցաւ: Ինքն էր նաեւ, որ իր ամբողջ գերդաստանը սովամահութենէն փրկեց: Նաեւ իրականացան այն տեսիլքները, որոնք երկար տարիներ առաջ տեսած էր: Եւ աւելի երկար տարիներէ եւ բազմաթիւ տնօրինումներէ ետք, իրենց կատարեալ լրումին ու նպատակակէտին հասան նաեւ Աստուծոյ կամքն ու մտադրութիւնը:

Նոյնը պատահեցաւ նաեւ Դաւիթի հետ: Աստուած զայն թագաւոր օժեց Սամուէլ մարգարէին միջոցաւ. սակայն, թագաւոր օժուելէ ետք, ան փախուստ տուաւ Սաուլ թագաւորէն, որ զինք հալածելով՝ կ'ուզէր սպաննել: Արդ, ինչ կը նշանակէ Աստուծոյ կողմէ Դաւիթի թագաւոր օժուիլը եւ ընդ է թագաւորութեան խոստումը, որ իր օժումէն ետք խոստացուեցաւ իրեն: Դաւիթ, թագաւոր օժուելէ ետք, բազմաթիւ նեղութիւններու եւ դժուարութիւններու ենթարկուեցաւ, որոնց պատճառաւ սկսաւ անապատին մէջ թափառիլ, նոյնիսկ հացէ զրկուելով: Անելին. Սաուլի դաւադրութիւններուն պատճառով, ան նոյնիսկ հեթանոսներու մօտ ապաստանեցաւ: Վերոյիշեալ նեղութիւններն ու դժուարութիւնները պաշարեցին Դաւիթը, որ Աստուած թագաւոր օժած էր: Ուստի, երկար ժամանակ փորձուելէ, ցաւեր ու նեղութիւններ կրելէ եւ համբերելէ ետք, երբ ան իր ամբողջ վստահութիւնն ու հաւատքը Աստուծոյ վրայ դրաւ (որպէս թէ ինք իրեն ըսած ըլլար, այն՝ ինչ որ Աստուած ըրաւ ինձի Սամուէլ մարգարէի միջոցաւ [խղով օժելը], եւ ինչ որ հրամայեց՝ անպայման եւ անկասկած որ պիտի իրականանան, թէկուզ երկար ժամանակ պահանջէ), յետոյ, որոշ ժամանակ մը ետք, Աստուծոյ կամքը կատարուեցաւ եւ երկար փորձութիւններէ անցած Դաւիթը թագաւորական գահ բարձրացաւ: Եւ այն ատեն ճանչցուեցաւ Աստուծոյ խօսքը եւ փաստուեցաւ նաեւ, թէ օժումը, որ Դաւիթ ստացաւ Սամուէլ մարգարէի ձեռքով՝ հաւաստի է եւ ճշմարիտ:

Մեծն Սուրբ Մակար (ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 1)

ԱՌԱՎԱ ՉԻՆՉ ՑՈՒՑԱՆԷ...

ԼԵՈՒՆԵՐՈՒՆ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Լեռներէն իրաքանչիւրը իր ունեցած զանազան առաւելութիւնները նկատի ունենալով, ինքզինք միաներէն գերադաս կը նկատէր: Այսպէս Յունաստանի մէջ Պոնտական եւ Պրոպոնտական լեռները, Արեւմուտքի մէջ Յետնէն՝ [Էթնա Երոպայի ամէնէն բարձր գագաթը], Պաղեստինի մէջ՝ կարմեղոսը, Ատրիքի մէջ՝ Կորդոքը, Հայաստանի մէջ տապանակիր Մասիսը, Աղուանքի մէջ՝ Կովկասեանը, Կիլիկիոյ մէջ Պախարեանը, Միջագետքի մէջ՝ Տաւրոսեանը եւ ուրիշ վայրերու մէջ՝ ուրիշներ: Սակայն Քորեբ լեռը կ'ընտրուի, անոր համար, որ Աստուծոյ խաչը հոն երեւցաւ Մոսէսին, Թափօր լեռը՝ ուր այլակերպեցաւ Տէրը եւ Գալիլիոյ լեռը՝ Տէրը հոն քարոզելուն համար: Այս պատճառաբանութիւններէն միաները կը լռեն, իրաւունք տալով անոնց:

Հերեւեալ իմաստը ունի այս օրինակը: Թէեւ հեթանոս կամ օրինակի համար հրեայ թագաւորներ փառքով մեծ կը նկատուին, բայց մարմնով եւ հոգիով խոնարհ մարդիկ, աւելի բարձր են առաքինութեամբ, երբ անոնց մէջ Աստուած կը բնակի:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ





ԻՆՉ Է ՍՐԲՈՒԹԻՒՆԸ

«Սրբութիւնը հազուագիտ առաքինութիւն մըն է. անմատչելի, անմերձենալի բարձրութիւն մը: Քիչեր, շատ քիչեր, բացառիկ անձեր, Աստուծոյ մէկ բացառիկ շնորհով օժտուած անհատներ կեանքի այդ բարձրագոյն կէտին կը հասնին»:

«Սրբութիւնը այս դարու մեր ժամանակներու յատուկ երեւոյթ մըն է. այլ կը պատկանի հին դարերուն, կու գայ անցեալէն: Արժեւորուած երեւոյթ մըն է նաեւ ճիշդ անոր համար որ այդ հնութեան կնիքը ունի իր վրայ: Սուրբերը անցեալին կը պատկանին: Որովհետեւ անցեալ դարերը կրօնագրած մթնոլորտով ներթափանցուած, հաւատքի գաղափարով եւ զգացումով տիրապետուած էին, մինչ ներկայ ժամանակները, գիտութեան, թեքնիքի, հաճոյքի, նիւթական առաւելութեանց տուեալներով են նուաճուած եւ տեղ չեն տար սրբութեան գաղափարին եւ վիճակին»:

Ահաասիկ սրբութեան մասին այսպիսի մտայնութիւն մը կայ մեր ժողովուրդին սովորական խափն մէջ. «Ես ո՞ր, սուրբը ո՞ր...» կ'ըսեն յաճախ անոնք: Ոմանք ալ կան, որոնք սրբութեան գաղափարին վերէն կը նային, տեսակ մը արհամարհուտ կեցուածքով: Բարի, սակաւախօս, անվնաս մարդ մը երբ տեսնեն՝ կ'ըսեն յաճախ. «Ինչ է, սուրբ եղար»:

Եկէք բաց մտք ով եւ հոգիով նայինք սրբութեան գաղափարին եւ վիճակին, քրիստոնէական, հարազատ, ճշգրիտ եւ կարելի եղածին չափով ամբողջական հայեացքով կարենալ ըմբռնելու համար անոր տարողութիւնը ինչպէս նաեւ առնչութիւնը մեր կեանքին հետ:

Սրբութիւնը Աստուծոյ պատկանող ստորոգելի մըն է. Սուրբը Աստուած ինքն է: Սրբութեան աղբիւրը իրմէ կը բխի:

Բոլոր կրօններու մէջ այս հիմնական գաղափարը կայ որպէս անոնց հասարակաց գիծերէն մէկը: Մարդ էակին սրբութիւնը Աստուծոյ սրբութեան ճառագայթումն է իր անձին մէջ կամ իր հաղորդութիւնը անոր հետ: Մարդ սուրբ է յարաբերաբար Աստուծոյ, այսինքն՝ Աստուծոյ հոգիին անոր բացումն է անոր ներկայութեան զգացումով ներթափանցուած անձ մը:

Սրբութիւնը երկու տարածքներ ունի, որոնք իրարու անհնարաբար անբաժան երեսներ են, նոյն էութեան ըլլալու տարբեր կերպերը, արտայայտութեան ձեւի տարբեր եղանակները.

- ա. Ներանձնական ապրում
- բ. Արտաքնային ճառագայթում
- Ներանձնական ապրումը մարդու հոգիին մէջ խաղաղութեան այն ներքին մտերմական վիճակն է, ուր հոգեկան յագեցումը այնպէս տիրապետող է ինչպէս գոհացման այն պահը զոր մարդ կ'ունենայ, իր ծարաւը զով ու զուլայ ջուրով լիացուցած ըլլալուն բնական հետեւանքով: Այստեղ է ուր իր հարազատ իմաստը կը գտնէ մեր հայոց ժամագիրքին (կամ Շարակնոցին) մէջ սաղմոսանման սա մաղթանքը.

«Յամենայն ժամու աղաչանք իմ այն ես. Ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր»:

Այս այն վիճակն է, զոր ես կ'երեսկայեմ, օրինակի համար, գիտակից, հաստացեալ մարդու մը համար երբ ան սուրբ հաղորդութիւն կը ստանայ եւ ինչպէս կ'ըսուի ժողովրդական բացատրութեամբ. «թեթեցայ», «մաքրուեցայ»: Երջանկութեան նախապայմանն է այս:

- Արտաքնային ճառագայթումը այդ ներքին հոգեկան խաղաղութենէն, աստուածայինին ներգործութենէն գոյութիւն առնող այն բարոյական կենցաղակերպն ու գործելակերպն է, որոնցմէ բարութիւնը, ծառայութիւնը այնպէս կը բխին, ինչպէս ճառագայթը արեւէն: Սրբութիւնը կեանքին մէջ կը թարգմանուի յարաբերական եւ գործունէական ընթացքով:

Սրբութիւնը, ներամիտքի, անձին մէջ սահմանափակելի վիճակ մըն է: Անպայման ձեւով մը կ'արտաքնանայ, կ'արտայայտուի: Ոմանց պարագային նուազ, ուրիշներու պարագային անելի չափով եւ տարբեր տարբեր եղանակներով: Սրբութեան վիճակը ներանձնական միայնակեաց տրամադրութիւններով ապրող մարդիկ աղօթքի կամ խորհրդածութեան գրականութեան մէջէն կ'արտայայտեն այդ արտաքնացումը, ինչ որ էր պարզան – եւ մինչեւ այսոր ալ – միայնակեաց կամ հայեցողական կենցաղով ապրող կրօնատրոնրու համար (օրինակ. Եգիպտոսի ճգնաւորները կամ այսօրուան լուսկեացները – (Թերափիսթ):

Նոյն վիճակը անելի գործունէական, շարժուն ձեւով կ'ապրին ուրիշներ, վանական կամ ոչ վանական:

Յամենայն դէպս, արտայայտութեան եղանակները պէտք չէ շփոթել բուն եղածին–սրբութեան ապրումը գոյավիճակին հետ:

Երկու կերպերն ալ ունեցած են – եւ կրնան ունենալ – չափազանցութեան զացող իրենց արտայայտութիւնները: Բայց ոչ մէկը կրնայ կտրուիլ արտայայտութեան «արտաքին» բնական պահանջէն եւ ոչ ալ միւրը կրնայ կտրուիլ ներանձնական, հայեցողական, աղօթատուցող հոգեկանութենէն: Այդպիսի պարագաներուն, մէկը կրնայ տանիլ անհատակեղորոնցութեան փորձութեան, որ ինքնին հակաքրիստոնէական է, եւ միւրը կրնայ առաջնորդել շարժուն գործունէապաշտութեան մը (աքթիվիզմ) անձնակեղորոն եւ անձնաքարոզ վտանգին, որ կը խաթարէ հարազատութիւնը սրբութեան քրիստոնէական հասկացողութեան:

Այս հասկացողութեամբ, սրբութիւնը առանձնաշնորհումը չէ որոշ անձերու: Կոչումն է բոլորին: Ուրիշ խօսքով՝ սրբութիւնը պէտք չէ այնպէս ըմբռնել, որ եկեղեցոյ գետեղուած պատկերին հետ նոյնացուի...:

Բնականօրէն, որոշ անձերու մէջ սրբութեան ներկայութիւնը, Աստուծոյ հետ հաղորդութիւնը այնքան շեշտուած եւ ճառագայթուն նկարագիր եւ տարողութիւն կ'ունենայ, որ եկեղեցին զանոնք յատուկ յարգանքի կ'արժանացնէ որպէս ներշնչման աղբիւր, որպէս բարեխօս առ Աստուած: Ահա ասոնք են որ տօնելի սուրբեր կը նկատուին եւ յատուկ օրեր եւ արարողութիւններ կը սահմանուին, շարականներ կը յորինուին, անոնց մէջէն որոշակի եւ ուժգնօրէն ատայայտուող սրբութիւնը պանծացնելու եւ զայն հաւատացեալներու կեանքին մէջ ձգտումի եւ ներշնչումի վերածելու նպատակով: Պատկերաւոր բացատրութեամբ կրնանք ըսել թէ՛ պարզ մարդիկ, որոնք սրբութեան վիճակ կ'ապրին իրենց մէջ՝ կը նմանին մոմերու. եկեղեցոյ կողմէ հոչակուած եւ տօնուած սուրբերը կը նմանին փարոսներու...:

Հաւատացեալներ սրբութեան ձգտումը իրենց մէջ պէտք է արտայայտեն առանց այն վախի կամ վերապահութեան, ըստ որուն սրբութիւնը իրենց չի պատկանիր, իրենց համար մատչելի չէ, այլ միայն ընտրեալներու յատուկ կենսավիճակ եւ առանձնաշնորհ է:

ԳԱՐԵԳՈՒ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ (ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 1)


ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՄԻՒՆԱՅԻ ՍԲԱՆՉԵԼԱԳՈՐԾ



Ս. Նիկողայոս Հայրապետը ծնած է Փոքր Ասիոյ Լիկիա գաւառի Բաթարա քաղաքին մէջ (ներկայիս Անթալիայի մօտիկ): Փոքր հասակէն կորսնցուցած է մեծահարուստ եւ բարեպաշտ ծնողը եւ մեծցած է իր մօրեղբոր՝ Նիկողայոս Երէց եպիսկոպոսի խնամքին ներքեւ: Աւետարանական պատգամը՝ «Ինչ որ ունիս՝ ծախսէ եւ աղքատներուն տուր» (հմմտ. Մտթ. 19.21), իր կեանքի նշանաբանը կը դարձնէ՝ իր խնամքը տարածելով աղքատներուն, հիւանդներուն, բանտարկեալներուն եւ որբերուն վրայ: Ժողովուրդի կամքով կը դառնայ Զմիւռնիոյ եպիսկոպոսը: Հալածանքներու ընթացքին կ'աքսորուի, սակայն չի դադարի ամենուրեք Աւետարանը քարոզել: Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս կը վերադառնայ իր աթոռը, 325-ին, կը մասնակցի Նիկիոյ Տիեզերական ժողովին: Կը վախճանի 326-ին: Ընդհանրական Եկեղեցոյ ամենասիրուած սուրբերէն է: Մանուկներու մասին տաճած հոգածու սիրոյն համար նկատուած է մանուկներու պաշտպան եւ ստացած է «Santa Claus» «Սանթաքլօզ» կոչումը:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Գրիգոր Աքանջեալագործի, Նիկողայոս Զմիւռնացի Աքանջեալագործ Հայրապետի եւ Միտոն եպիսկոպոսի յիշատակը կը տօնէ Ս. Խաչի Ժ. Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՍԲԱՆՉԵԼԱԳՈՐԾ (210-270)



Ս. Գրիգոր Աքանջեալագործ ծնած է շուրջ 210 թուականին, Պոնտոսի (Սեբաստիա) Նէոկեսարիա քաղաքին, ազնուական ընտանիքի մը մէջ: Ս. Գրիգոր մտադիր էր հմտանալ օրէնսգիտութեան եւ հռետորութեան մէջ, սակայն Աստուած անոր եւ իր եղբոր համար այլ ճանապարհ նախասահմանած էր: Անոնք ուսում ստացան Աթէնքի մէջ, ապա՝ Պաղեստինեան Կեսարիա քաղաքին մէջ, աշակերտելով այն ժամանակուայ ամենահեղինակաւոր քրիստոնէայ մատարականին՝ Որոգինեսին:

Նէոկեսարիա վերադառնալով՝ Ս. Գրիգոր կը ձեռնադրուի եպիսկոպոս: Ասանդութեան համաձայն, Ս. Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրուելու օրերուն Նէոկեսարիոյ մէջ հագիւ 17 քրիստոնէայ կար, իսկ մահուան օրերուն՝ ընդամենը 17 հեթանոս: Իր անուան հետ կապուած բազմաթիւ հրաշքներու համար արժանացած է «Աքանջեալագործ» մակդիրին:

Ս. Գրիգոր աչալըջութեամբ կառավարեց թէ՛ իրեն վստահուած թեմն ու ժողովուրդը եւ թէ՛ եղաւ մեծ մատենագիր՝ թողելով բազմաթիւ աստուածաբանական երկեր: Ան վախճանած է 270 թուականին խաղաղ մահուամբ:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Գրիգոր Աքանջեալագործի, Նիկողայոս Հայրապետի եւ Միտոն եպիսկոպոսի յիշատակը կը տօնէ Ս. Խաչի Ժ. Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:

ՏՈՆ ԸՆԾԱՅԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՏԻ



Մարիամ դուստրն էր Յովակիմի եւ Աննայի: Աւանդութենէն քաղելով պատմութիւնը, գիտենք որ Աննա ամուսն էր եւ Մարիամ ուխտի գաւակն էր անոնց:

Համաձայն այս ուխտին, երբ Մարիամ երեք տարեկան եղաւ, ծնողքը զայն ընծայեց տաճարին, որպէսզի հոն նուիրեալ այրիներու եւ կոյսերու խնամքին եւ հոգատարութեան ներքեւ՝ Աստուածային պաշտամունքով մեծնայ եւ տաճարին ծառայէ: Այս ընծայումն է, որ մեր տօնացոյցին մէջ արձանագրուած է Տօն Ընծայման Ս. Աստուածածնի երից ամաց ի տաճարն: Աստուածամօր երեք տարեկանին տաճար ընծայման տօնը, անփոփոխ կերպով կը կատարուի 21 Նոյեմբերին: Ըստ երեւոյթին, ասիկա յետագային՝ վերջին երեք հարիւր տարիներու ընթացքին հաստատուած տօն է. նախ՝ որպէս կամատր ոգեկոչելի եւ ապա՝ պարտատրիչ տօն:

Ս. ՅՈՎԿԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ (347-407)



Ս. Յովհան Ոսկեբերանը, ընդհանրական Եկեղեցոյ տասներկու վարդապետներէն մէկն է: Ծնած է 347-ին, Անտիոքի մէջ, ազնուական ընտանիքի մէջ, ազգութեամբ՝ ասորի: Հայրը մահացեր է երբ ան տակաւին մանուկ էր: Մօր բարի խնամքին շնորհիւ ստացեր է լաւ կրթութիւն՝ ուսանելով ժամանակի հռչակաւոր հռետոր եւ ճարտասան Լիբանիոսի մօտ:

380-ին Մելիտոս եպիսկոպոսի թախանձագին հարկադրանքով սարկաւազ կը ձեռնադրուի: 386-ին Մելիտոսին յաջորդած Փլաբիանոս հայրապետը զայն քահանայ կը ձեռնադրէ: 397-ին կը վախճանի Կ. Պոլսոյ Նեկտարիոս պատրիարքը, եւ Արկադիոս կայսրը, տեղեակ ըլլալով Ս. Յովհան Ոսկեբերանի համբաւի մասին, կը պատուիրէ, որպէսզի զայն անմիջապէս, անաղմուկ բերեն Կ. Պոլիս՝ Պատրիարք ձեռնադրելու:

398-ին տեղի կ'ունենայ անոր ձեռնադրութիւնը: Իր հօտին նուիրուած հովիւր ոչ միայն քաղցրութեամբ կը խրատէր, այլ երբեմն՝ յանդիմանութեամբ, այդ էր պատճառը, որ շուտով անուանի Հայրապետը շատ հակառակորդներ կ'ունենայ: Այդ հակառակորդներու շարքին մէջ էր նաեւ Եղոքսիա թագուհին, որ կը յանդիմանուէր Հայրապետի կողմէ արքունական յոռի բարբերու պատճառով: Իր թշնամիներու սաղարթով 403-ին ան կ'աքսորուի, սակայն վախճանով ժողովուրդի ցասումէն եւ այդ օրերուն տեղի ունեցած երկրաշարժէն՝ արքունիքը ետ կը բերէ Հայրապետը: 404-ին Ս. Յովհան Ոսկեբերանը դարձեալ կ'աքսորուի Կիլիկիոյ Կոկիսոն քաղաքը, անելի ուշ՝ Բիզանդիա: 2դիմանալով ճանապարհի դժուարութիւններուն՝ 407-ին կը վախճանի: Անոր արտասանած վերջին բառերն են. «Փանօք քեզ, Աստուած, փանօք քեզ, ամէն ինչի համար փանօք քեզ»: 438-ին, սուրբի մարմինը մեծ հանդիսատրութեամբ կը բերուի եւ կ'ամփոփուի Կ. Պոլսոյ Ս. Առաքելոց Եկեղեցոյ մէջ:

Ընդհանրական Եկեղեցոյ այս անխոնջ մշակի «ՈՍԿԵՐԵՐԱՆ» խօսքերը դարեր շարունակ առաջնորդէր եւ կրթէր են բազում եկեղեցական սերունդներ: Անոր խօսքերէն կատարուած մեջբերումներու կը հանդիպինք ամենուրեք: Ան յայտնի է իր Աստուածաշունչ մատենանի գիրքերու մեկնութիւններով: Բազմատեսակ է անոր մատենագրական վաստակը՝ մեկնութիւններ, ճառեր, ներբողներ, թուղթեր եւ այլն, որոնք իրենք բարեարար ազդեցութիւն ունեցած են քրիստոնէական մտքի պատմութեան վրայ: Անոր գործերը հայերէնի թարգմանուած են, արդէն իսկ իր կենդանութեան օրերուն:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Յովհան Ոսկեբերանի յիշատակն ամէն տարի կը տօնէ երկու անգամ, նախ՝ Տասներկու վարդապետներու շարքին՝ Խաչվերացի Զ. Կիրակիին յաջորդող շաբաթ օրը, ապա, առանձին՝ Խաչվերացի Ե. Կիրակիին յաջորդող շաբաթ օրը:





ԱՐՕԹՔ ՅԱԶՈՂՈՒԹԵՆԷ ՄԸ ԵՏՔ

Բարերար Աստուած, միայն դու ես որ զիս քու բարիքներովդ կ'ողողես: Կ'օրհնաբանեմ քեզ եւ շնորհակալութիւն կը յայտնեմ այն բոլոր բարիքներուն համար՝ որ առատօրէն անարժանիս կը պարգեւես քու սիրոյ գանձերէդ: Կը փառաւորեմ քեզ եւ ամբողջ սրտովս գոհութիւն կը յայտնեմ, միշտ եւ ամէն բանի համար, եւ ամէն բանէ աւելի կը խնդրեմ՝ որ քու արքայութիւնդ, արդարութիւն եւ իմաստութիւն շնորհես ինձի, որպէսզի կարենամ լաւապէս մատակարարել ճիշտօրէն քու տուած պարգեւներդ՝ կանուխէն խորհելով եւ պատրաստուելով ապագայ ծախորդութեանց (հմմտ Ղկ 16.3- 9), եւ ըստ այնմ յօժարակամ ուրախութեամբ կարօտեալներուն տամ ինչ որ պէտք է իրենց, ինչպէս որ դուն կը բաւարարես իմ բոլոր պէտքերս:

Միշտ քու երկիւղիդ, սուրբ օրէնքիդ եւ արդարութեանդ մէջ պահէ զիս, որպէսզի չըլլայ որ հպարտանամ եւ անհաւատ դառնամ այս անցաւոր հարստութիւններով, որովհետեւ այս կեանքի մէջ չկայ կայուն բան եւ վիճակ, եւ չեմ գիտեր թէ վաղը ինձի ինչ կը բերէ: Հետեալբար կ'աղաչեմ, քու բարի պարգեւներովդ հետ միասին՝ նաեւ խոնարհ, հեզ եւ գթասիրտ հոգի մը տուր ինձի, որպէսզի քու կամքիդ եւ սուրբ օրէնքիդ համաձայն ապրիմ, եւ նոյնիսկ երբ ծախորդութեան եւ չքատրութեան, վիշտերու եւ տագնապներու մատնուիմ, կարենամ տոկալ եւ կրել քաջութեամբ, անտրտունջ եւ գոհունակ սրտով, միշտ շնորհակալութիւն յայտնելով քու սուրբ կամքիդ համար. որովհետեւ քեզմէ է ամէն բան, եւ դուն է որ կը հատուցանես, մեր գործերուն եւ մտածողութեան համաձայն: Քեզի փառք յախտեանս: Ամէն:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

- **Ինչ է մկրտութիւնը:**
Մկրտութիւնը խորհուրդ մըն է, որ կը կատարուի եկեղեցւոյ սուրբ Ասագանին մէջ ջուրով եւ Աստուծոյ խօսքով:
- **Ինչպէս կ'ըլլայ մկրտութիւնը:**
Ամենասուրբ Երրորդութեան անունով, Քահանան մկրտեալը ջուրին մէջ երեք անգամ կ'ընկղմէ:
- **Ինչո՞ւ համար երեք անգամ կ'ընկղմէ:**
Երեք անգամ ընկղմելը օրինակն է Քրիստոսի երեքօրեայ թաղման:
- **Ինչ է մկրտութեան օգուտը:**
Երախան մկրտութեամբ կը մաքրուի սկզբնական մեղքէն, որ իրեն հետ ծնած է, եւ մանաւանդ սուրբ Ասագանէն վերստին ծնելով Աստուծոյ որդի, քրիստոնեայ եւ Սուրբ Եկեղեցւոյ անդամ կ'ըլլայ:
- **Ինչ է մկրտութեան խորհուրդին պայմանը:**
Երախան եթէ մանուկ է, իր կնքաւոր բերնով, իսկ եթէ չափահաս է, ինքն իր բերնով պէտք է հաւատք, յոյս, սէր եւ մկրտութիւն խնդրէ:
- **Ինչ է հաւատքը:**
Հաւատքը այն ներքին հաստատ համոզումն է, որով մենք կը դաւանինք Աստուծոյ Որդիին միջոցաւ յայտնուած ճշմարտութիւնները:
- **Ո՞ր կը գտնուին այդ ճշմարտութիւնները:**
Անոնք կը գտնուին Աստուծաշունչին մէջ:
- **Ինչ է յոյսը:**
Յոյսը աստուածային պարգեւ մըն է, որով կը սպասենք վայելել Աստուծոյ խոստացած բարիքները, թէ՛ հոս եւ թէ՛ հանդերձեալին մէջ:
- **Որո՞նք են Աստուծոյ խոստացած բարիքները:**
Ներքին խաղաղութիւնը, Սուրբ Հոգիին պտուղներն ու պարգեւները եւ անվախճան երանութիւնը:
- **Ինչ է սէրը:**
Սէրը գերազանց առաքինութիւն մըն է, որով մենք կը սիրենք զԱստուած ամէն բանէ աւելի, եւ մեր ընկերն ալ՝ մեր անձին պէս:
- **Ինչ է դրոշմը:**
Դրոշմը Սուրբ Միւռոնով օծումն է. այս խորհուրդը առաքեալներուն ժամանակ ձեռք դնելով կը կատարուէր, որուն միջոցաւ մկրտեալը Սուրբ Հոգին կը ստանար:
- **Հիմա ինչպէս կը կատարուի:**
Դրոշմը կը կատարուի երեխային նախ ճակատը, ապա աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, կոնակը եւ ոտքերը Սուրբ Միւռոնով խաչաձեւ օծելով:
- **Ինչ օգուտ ունի դրոշմը:**
Դրոշմը Սուրբ Հոգիով կը զօրացնէ մկրտեալին քրիստոնէական հաւատքը եւ զօրութիւն կու տայ պատուէրները պահելու:

ՏՕՆԱՅՈՅՑ - ՆՈՅՆԲԵՐ

- ԴՂ. 1 Նոյեմբեր – Պահք:
- ԵՂ. 2 Նոյեմբեր – Տօն Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի հայրապետին:
- Ուրբ. 3 Նոյեմբեր – Պահք:
- Շբթ. 4 Նոյեմբեր – Տօն ամենայն Սրբոց, հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից:
- Կիր. 5 Նոյեմբեր – Ը. Ջկնի Ս. Խաչի:
- ԲՂ. 6 Նոյեմբեր – Տօն Սրբոցն՝ Ստեփանոսի Հռովմայ հայրապետին, եւ քահանայիցն, եւ սարկաւագացն, եւ ժողովորոցն:
- ԳՂ. 7 Նոյեմբեր – Տօն Սրբոցն՝ Ակիփսիմեայ եպիսկոպոսին, եւ Յովսէփայ քահանային, Այիթալայ սարկաւագին, եւ Պղատոնի վկային:
- ԴՂ. 8 Նոյեմբեր – Պահք:
- ԵՂ. 9 Նոյեմբեր – Տօն Սրբոց Հայրապետացն՝ Մետրոփանոսի, Աղէքսանդրոսի եւ Պօղոսի խոստովանողին, եւ նօտարացն՝ Մարկիանոսի, եւ Մարտիրոնի:
- Ուրբ. 10 Նոյեմբեր – Պահք:
- Շբթ. 11 Նոյեմբեր – Սօն Սրբոց Հրեշտակապետացն՝ Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:
- Կիր. 12 Նոյեմբեր – Թ. Ջկնի Ս. Խաչի:
- ԲՂ. 13 Նոյեմբեր – Տօն Սրբոցն՝ Մելիտոսի Անտիօքայ հայրապետին, եւ Մինասայ Եգիպտացոյն, եւ միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային, եւ Շինու սարկաւագին:
- ԳՂ. 14 Նոյեմբեր – Տօն Սրբոցն՝ Դեմետրեայ վկային, եւ Բասիլիսկոսի քահանային:
- ԴՂ. 15 Նոյեմբեր – Պահք:
- ԵՂ. 16 Նոյեմբեր – Տօն Սրբոցն՝ Գուրիասայ, Սամոնասայ, եւ Աբիբայ սարկաւագին, Ռոմանոսի միայնակեցին, Մանկանն խոստովանողին, եւ Հիւսիքոսի զինաւորին:
- Ուրբ. 17 Նոյեմբեր – Պահք:
- Շբթ. 18 Նոյեմբեր – Տօն Սրբոց Առաքելոցն՝ Անդրէի եւ Փիլիպպոսի:
- Կիր. 19 Նոյեմբեր – Ժ. Ջկնի Ս. Խաչի: Բարեկենդան Յիսնակի Պահոց:
- ԲՂ. 20 Նոյեմբեր – Ա. Օր Յիսնակի Պահոց:
- ԳՂ. 21 Նոյեմբեր – Բ. Օր Յիսնակի Պահոց: Տօն Ընծայման Սուրբ Աստուածածնի երից ամաց ի տաճարն:
- ԴՂ. 22 Նոյեմբեր – Գ. Օր Յիսնակի Պահոց:
- ԵՂ. 23 Նոյեմբեր – Դ. Օր Յիսնակի Պահոց:
- Ուրբ. 24 Նոյեմբեր – Ե. Օր Յիսնակի Պահոց:
- Շբթ. 25 Նոյեմբեր – Տօն Սրբոցն՝ Գրիգորի Աքանջեղագործին եւ Նիկողայոսի հայրապետացն, եւ Միւռոնայ եպիսկոպոսին:
- Կիր. 26 Նոյեմբեր – Ա. Յիսնակի:
- ԲՂ. 27 Նոյեմբեր – Տօն Սրբոց Կուսանացն՝ Յովհաննեայ եւ Վասիլուիւոյն:
- ԳՂ. 28 Նոյեմբեր – Տօն Սրբոցն՝ Ղունկիանոսի քահանային, Տարագոսի, Պրորոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ, եւ այլոց աշակերտացն սրբոյն Պօղոսի:
- ԴՂ. 29 Նոյեմբեր – Պահք:
- ԵՂ. 30 Նոյեմբեր – Տօն Սրբոցն՝ Կղեմայ հայրապետին, եւ Բագրատայ Տոռոմենոյ եպիսկոպոսին:

Artsakh President hopes displaced residents will repatriate

YEREVAN — Artsakh President Samuel Sharamanyan said that he hopes conditions will be created so that the residents of Artsakh who fled en-masse will repatriate to their home.

Speaking in an interview on October 28 with Artsakh State Television, Sharamanyan detailed the challenges facing his government and the Artsakh population since the large scale offensive launched by Azerbaijan on September 19 and his ensuing decision to sign an agreement on September 28 essentially dissolving the Artsakh Republic.

He also noted that during and after the military operations in September, that triggered a mass exodus of Artsakh residents to Armenia, Russia, through its peacekeeping forces, acted as mere “observers.”

Shahramanyan also made clear that one of his top priorities now is to assert “the right of our citizens displaced from Artsakh to return home.”

“Various political centres — the American, European and Russian ones — are interested

in the issue of the return of the population,” Shahramanyan said. “I think that Azerbaijan is also interested in that because they are accused by the international community of forcibly deporting the population. And I think that negotiations should start on that issue.”

“Hours after the start of military operations [on Sept. 19], I realized that we were alone against Azerbaijan’s aggression,” Sharamanyan, who was selected by the Artsakh Parliament to assume the presidency 10 days before the attacks, said in the interview.

“On the morning of September 19, I was with the commander of the Russian peacekeeping forces. The initial indication of a potential military operation came when the Azerbaijani forces stationed at a base near Shushi approached the Russian base, which was at the same location, and advised them to take cover, as artillery would soon start firing. We brought this informa-

Continued on page E2

Pashinyan calls into question Armenian citizenship of displaced Artsakh residents

YEREVAN—Armenia’s Prime Minister Nikol Pashinyan indicated on October 25 that his government does not regard refugees from Nagorno-Karabagh’s as Armenian citizens despite the fact that virtually all of them hold Armenian passports.

Pashinyan said that the government will therefore grant the more than 100,000 Karabagh Armenians, who fled their homeland after last month’s Azerbaijani military offensive, “temporary protection” formalizing their status of refugees. This, he said, will increase “the possibilities of protecting their rights in the local and international arenas.”

“Right after that decision, our sisters and brothers from Nagorno-Karabagh will have an opportunity to apply for Armenian citizenship and we will solve that issue in the fastest possible way,” he added during the government’s question-and-answer session in the parliament.

An Armenian law on refugees stipulates that only foreign nationals and stateless persons are eligible for the “temporary protection status.”

Many of some 20,000 other Karabagh residents who took refuge in Armenia prior to the September mass exodus have sought such a status for almost three years in hopes of receiving regular government aid. They say government officials in Yerevan have repeatedly told them that they do not qualify because of being citizens of Armenia.

“If they have Armenian

passports, it means they are citizens of Armenia,” the head of the government’s Migration Service insisted recently.

Ara Ghazaryan, an international law expert, made the same point when he spoke to RFE/RL’s Armenian Service hours before Pashinyan’s announcement. Ghazaryan said that under the law in question, the displaced Karabagh Armenians are formally not refugees.

Pashinyan’s government sparked controversy earlier this month when it refused to pay Karabagh’s public sector salaries, pensions and other benefits. The decision caused discontent among civil servants, teachers, military and security personnel, pensioners and other socially vulnerable people who made up a large part of Karabagh’s population. They will not be even paid for September.

Deputy Prime Minister Tigran Khachatryan said that these and other refugees will instead receive 50,000 drams (\$125) each in November and December in addition to 100,000 drams given to them this month.

“I had a monthly salary of 150,000 drams, plus my pension,” complained Seda Sargsyan, who worked as an accountant in Karabagh’s northern Martakert district before fleeing to Armenia with her family.

“We don’t want charity,” said another Karabagh woman. “My family has lost a member during each war [with Azerbaijan.]”

(Azatutyun.am)

‘Everything is on the table’ Joly says of potential Azerbaijan sanctions, at Armenian embassy opening

BY NEIL HAUER



YEREVAN — Ottawa opened its first-ever embassy in the distant Republic of Armenia on October 25, making history as Canada’s first in the South Caucasus region.

Foreign Minister Melanie Joly was on hand for the event, visiting Armenia to both officially open the embassy and for a raft of meetings with Armenian officials.

“Canada stands by the people of Armenia and supports their sovereignty and independence,” Joly said at a press conference with her Armenian counterpart, Ararat Mirzoyan. “We believe in your democratic aspirations and are ready to work with you to make them a reality,” she said.

Joly’s visit to Armenia comes in the wake of a humanitarian crisis following the influx of 100,000 refugees from the disputed Nagorno-Karabagh region last month.

Internationally recognized as part of Azerbaijan, Nagorno-Karabagh had been de facto independent for more than three decades, with multiple wars in that span. Following a nine-month blockade, Azerbaijan attacked the territory again on Sept. 19, leading to a mass forced displacement of nearly the entire ethnic Armenian population to Armenia.

Canada and Joly had regularly called for Azerbaijan to lift its blockade, and were “gravely concerned” by Azerbaijan’s assault last month. Speaking in Yerevan, Joly announced an additional \$1 million of aid for refugees from Nagorno-Karabagh.

The minister also hinted that more consequences for Azerbaijan, including sanctions, could be on the table from Canada if the country’s aggression against Armenia itself continues.

“Everything is on the table,” said Joly, in response to CTV News’ question regarding the possibility of sanctions against Azerbaijan. “We expect that Armenia’s sovereignty will be respected, and we are closely watching this,” Joly said.

The embassy in Armenia is Canada’s first in the South Caucasus region, which was previously covered by the Canadian embassy in Moscow. Neither of the other two regional countries — Georgia and Azerbaijan — host a Canadian embassy.

‘THE ONLY DEMOCRACY IN THE REGION’

The choice of Armenia as Canada’s entry to the region was a pointed one. Countries with embassies in only one of the South Caucasus countries usually choose Georgia, with both its longtime pro-Western orientation and ability to cover all three regional countries. But democratic backsliding there, as well as Armenia’s strong pro-Western turn in the past year, made Armenia a more attractive option.

“This is the only democracy in the region,” said Stephane Bergeron, the Bloc Quebecois MP for Montarville, Que. and one of two MPs besides Joly on the trip. “So they need support. And this is why I think it’s important to intensify the relations between Canada and Armenia,” Bergeron said.

Lyndsay Mathysen, in attendance as the NDP MP for London-Fanshawe, Ont. echoed these sentiments.

“This is a historic moment, one that the Armenian diaspora and politicians have been working on for many, many years now,” Mathysen said. “For our [two] countries, economically, politically, there’s a lot going on. We

can certainly benefit from strengthening the relationship between Canada and Armenia, and this is a wonderful way to do that,” she said.

Canada’s commitments in Armenia have already gone beyond the establishment of a permanent diplomatic mission and humanitarian aid.

In July, Global Affairs Canada announced that Canada would be joining the European Union’s Mission in Armenia (EUMA), becoming the first third-party country to do so.

The mission was established in February to observe the country’s border with Azerbaijan in the wake of a two-day Azerbaijani offensive into Armenia last September that saw Azerbaijani troops occupy a swathe of Armenian territory. Joly visited the Armenian town of Jermuk, close to last year’s fighting, on October 26, observing Azerbaijani military positions on Armenian territory alongside the EUMA.

That attack by Azerbaijan, as well as last month’s assault on Nagorno-Karabagh, has fuelled fears of further Azerbaijani military offensives against Armenia itself. While Azerbaijani officials have denied any territorial designs on Armenia, regular belligerent statements by Azerbaijani President Ilham Aliyev, as well as irredentist claims against Armenia itself, have cast doubt on these.

‘TIME TO IMPOSE SANCTIONS’

Bergeron underscored the need for consistency in Canada’s foreign policy and support for a fellow democracy under attack by an autocratic neighbour in his support of the embassy opening.

“Very often [Canada] decides to chastise a country that attacks another one, [but we were] silent when Azerbaijan not only attacked Nagorno-Karabagh, but also the sovereign territory of Armenia,” Bergeron said. “We were all together to support Ukraine, so I don’t understand why we’re not together to support Armenia that was attacked by Azerbaijan.”

“I think it’s time to impose sanctions against the leaders of this country [Azerbaijan], because an aggression is an aggression, no matter which country [does it],” Bergeron said.

For Sevag Belian, the executive director of the Armenian National Committee of Canada (ANC), the opening of the embassy and Joly’s visit were a good start — but hopefully just the beginning.

“I think that Canada is pivotal in terms of supporting the physical integrity of Armenia,” Belian said. “Having a Canadian presence here... is a message that I think Canada is trying to project, that Armenia is a country that needs help, in the face of aggression by Azerbaijan,” he said.

As Canada establishes itself in the region, Belian hopes that additional pressure on Azerbaijan by Ottawa can help restore stability to the South Caucasus.

“For the last three years, since the 2020 war and especially over the last month, we’ve [ANC] been very clear, asking the Canadian government to take decisive action [against Azerbaijan],” Belian said. “Sanctions are one way, but there are many levers that [Canada] can use. We’d like to see real, tangible results, and we’re confident that the [Canadian] government is moving in that direction.”

(CTVNews.ca)

